Digitally signed by GALSTYAN KNARIK

ՀՀ Արմավիրի մարզի <<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի ներքին գնահատման հաշվետվություն

2022-2023

ուստարի

Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման հաշվետվության ձև և մեթոդական ուղեցույց

1. Նախաբան

Վերջինտարիներին Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացման քաղաքականության մեջ առանցքային տեղ է գրավում հանրակրթական ուսումնական հաստատությունների և ուսուցիչների գործունեության, ինչպես նաև սովորողների ուսումնառության վերջնարդյունքների գնահատման գործընթացների բարելավման ուղղությամբ կատարվող աշխատանքները:Մասնավորապես, որոշակի քայլեր են կատարվելգնահատման չափելի ցուցանիշներ սահմանելու և համապատասխան գործառույթներ ներդնելու ուղղությամբ: Դրա վկայությունը 2009 թվականի հուլիսի 10–ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին և արտաքին գնահատում իրականացնելու պահանջի սահմանումն էր: Օրենքով նաև սահմանվել և հստակտարանջատվել ենուսումնական հաստատության գործունեության վերահսկողության (հոդված 33) և ուսումնական հաստատության գործունեության գնահատման գործառույթները (հոդված 34):

Ելնելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ ՀՀ կառավարությունը 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N1334-Ն որոշմամբ հաստատել է «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգը»:

Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատումը բխում է ոչ միայն ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված պահանջներից, այլ նաև համահունչ է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ու ՀՀ Կրթության և գիտության նախարարության համագործակցության շրջանակներում իրականացվող «Երեխայակենտրոն դպրոց» ծրագրի հայեցակարգային դրույթներին:

2. Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ներքին գնահատման նպատակը, խնդիրները և ընթացակարգը

Հանրակրթական ուսումնական հաստատության(այսուհետ՝ հաստատություն) ներքին գնահատումըհաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկման և ընթացիկ հսկողության գործընթաց է: Այն հստակ կազմակերպված, նպատակաուղղված և պարբերաբար իրականացվող գործընթաց է, որի պատասխանատուն տվյալ հաստատությունն է:

Հաստատության գործունեության ներքին գնահատման նպատակն է՝բարելավել հաստատության կողմից մատուցվողկրթական ծառայությունների որակը և բարձրացնել արդյունավետությունը կամ, այլ կերպ ասած, նպաստել ուսումնական հաստատության գործունեությանհետագա բարելավմանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և սովորողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով:

Ըստ էության՝«Ներքին գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր գործունեության վերլուծությունն է» («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք հոդված 34):

Համաձայն «Հանրակրթության մասին»ՀՀ օրենքի՝ հաստատության գործունեության ներքին գնահատման խնդիրներն են՝

ա) հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանության գնահատումը.

բ) ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանների և դրանց բարելավմանն ուղղված աշխատանքների գնահատումը.

դ) հանրակրթական ծրագրերի իրականացման, դասավանդման մեթոդների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության գնահատումը.
գ)հաստատության գործունեության վերաբերյալ շահառուների՝ սովորողների և նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), հաստատության մանկավարժական, վարչականև այլ աշխատողների, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի,պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների, գործատուների և այլն, իրազեկվածության աստիճանի բարձրացումը և ամբողջական տեղեկատվության տրամադրումը նրանց.
դ) հաստատության հաշվետվողականության մեխանիզմների բարելավումը և գործունեության թափանցիկության ապահովումը
ե) հաստատության զարգացման ուղղությունների նախանշման և զարգացման ծրագրերի մշակման խթանումը.
զ) հաստատության գործունեության գնահատման գործընթացում վարչական և մանկավարժական աշխատողների, սովորողների և ծնողների ներգրավումը

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջների և «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանշների սահմանման և իրականացման կարգի» բաժնի 3-ի՝

- «Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են ուսումնական հաստատության վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և նրանց ծնողները (օրինական ներկայացուցիչները)»
- «Ներքին գնահատման հաշվետվությունն ուսումնական հաստատության տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդին, մանկավարժական, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև երկշաբաթյա ժամկետում ապահովում դրա հրապարակումը տվյալ ուսումնական հաստատությունում (տեսանելի տեղում), տեղական և (կամ) հանրապետական մամուլում, նախարարության պաշտոնական կայքում»:
- «Ներքին գնահատումն իրականացվում է ուսումնական հաստատության տնօրենի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովի կողմից:Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (ուսումնական հաստատության խորհրդի) առնվազն երկու, մանկավարժական և ծնողական խորհրդների՝ ուսումնական հաստատության խորհրդի կազմում չընդգրկված առնվազն մեկական անդամ, տեղական ինքնակառավարման մարմնի (Երևանի քաղաքապետարանի) առնվազն երկու ներկայացուցիչներ:
- / 6/

Տնօրենը հանձնաժողովի նախագահն է և ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը: Հանձնաժողով՝ 6+1

Հանձնաժողովը հաստատում է իր աշխատակարգը, սահմանում ներքին գնահատում անցկացնելու գործողությունների ծրագիրը, մեթոդները և ժամանակացույցը:

Ներքին գնահատման արդյունքում հանձնաժողովի նախագահը նախապատրաստում է ներքին գնահատման հաշվետվությունը՝ ըստ նախարարության սահմանած ձևի>>:

3. Հաստատության ներքին գնահատման գործընթացի իրականացումը և հաշվետվության պատրաստման մեթոդական երաշխավորություններ

Հաստատության ներքին գնահատմանհաշվետվության պատրաստման ժամանակ առաջարկվում է առաջնորդվել սույն մեթոդական երաշխավորություններով և բաժին 2-ում տրված Հաշվետվային ձևով:

Հաստատության ներքին գնահատման հաշվետվության պատրաստման համար հիմք են հանդիսանում հաստատության ներքին գնահատման ցուցանիշները և չափանիշները, հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների կողմից հաստատության

գործունեության այս կամ այն ոլորտի վերաբերյալ տրված գնահատումները: Հաստատության գործունեության ներքին գնահատման գործընթացը ներառում է հետևյալ երեք բաղադրիչ՝

1. մեկնարկային պայմանների (ռեսուրսների) գնահատում
2. գործունեության ընթացիկ գնահատում
3. գործունեության արդյունքների գնահատում

Վերը նշված բաղադրիչներից յուրաքանչյուրը գնահատվում է ըստ հաստատության գործունեությունը նկարագրող հետևյալ ոլորտների՝

- հաստատության անվտանգություն
- հաստատության գործունեության արդյունավետություն և ուսումնական գործընթացի որակ.
- հաստատություն կողմից ներառական կրթության և հավասարության ապահովում,
- համայնքային մասնակցություն

Վերոնշյալ 4 ոլորտներից յուրքանչյուրի համար սահմանված էգնահատմանցուցանիշների և չափանիշների համախումբ: Յուրաքանչյուր ցուցանիշիկամ չափանիշի համար տրված է գնահատման ձևը,մեթոդը, պարբերականությունը և հաշվարկման մեթոդաբանությունը:Բոլոր 4 ոլորտներիգնահատմանցուցանիշների և չափանիշներիամբողջականցանկը, ինչպես նաև դրանց հաշվարկման, վերլուծմանկամ գնահատման ձևը տրված էՀավելված 1-ում:

Հաշվետվայինձևիլրացմանընթացքումցուցանիշներին չափանիշների ճշգրիտ հաշվարկը և կիրառությունը,հիմնվածտեղեկատվությանհավաքագրմանևվերլուծությանտարբեր մեթոդներիվրա, հանդիսանում էհաստատության գործունեությանինքնավերլուծությանորակիհիմնականգրավականը: Առաջարկվողցուցանիշներիցև չափանիշներից յուրաքանչյուրըհանդիսանում էգնահատմանմեթոդաբանությանբաղկացուցիչևհիմնվածէտեղեկություններիուտվյալներիհավաքագրման, վերլուծությանուրույնմեթոդիվրա:

Ցուցանիշներին չափանիշների հաշվարկման ժամանակկիրառվումենհետևյալմեթոդները՝

- վիճակագրական տվյալների վերլուծություն
- փաստաթղթային վերլուծությունայստեղ/նայլուր/կետադրությունպետքչէ
- հարցումների իրականացում և արդյունքների վերլուծություն

Որոշ ցուցանիշների և չափանիշների հաշվարկման համար կիրառվում են նաև համակցված մեթոդներ:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ենթադրում է՝
վիճակագրական տվյալների հավաք և համակարգվածներկայացում աղյուսակների և գրաֆիկների միջոցով, իսկ այնուհետև եզրահանգումների,կանխատեսումների կատարում և առաջարկությունների ներկայացում:
Փաստաթղթային վերլուծությունը ենթադրում է՝
հաստատության գործունեությունն ապահովող ներքին փաստաթղթերի, վիճակագրական տվյալների և հաշվետվությունների ուսումնասիրություն, արդյունքների արձանագրում, եզրահանգումներիկատարում և առաջարկությունների ներկայացում:
Դիտարկումը կամ փաստագրումը ենթադրում է՝
ըստ սահմանված ցուցանիշներին չափանիշների՝ հաստատության մարդկային, նյութական, ֆինանսական ռեսուրսների առկայության (կամ դրանց բացակայության) ու դրանց վիճակի, ինչպես նաևուսումնասիրվող գործընթացներիարձանագրում կամ նկարագրում՝ աղյուսակների, դիտարկման քարտերի կամ գրառման այլ ձևերով: Դիտարկման միջոցով ստացվող տեղեկատվությունը բազմաբնույթ և օգտակար է ոչ միայն ինքնավերլուծության, այլ նաև հաստատության գործունեությունը լիարժեք ներկայացնելու համար:
Հարցումների անցկացումըենթադրում է՝
հաստատության գործունեությունը նկարագրող որևէ ցուցանիշիկամչափանիշի (դրանց խմբի) վերաբերյալտարբեր շահառուխմբերի կարծիքի ուսումնասիրություն: Կախված ուսումնասիրվող ցուցանիշի և չափանիշի բնույթից և նպատակից՝հարցումները կարող են իրականացվել հարցվողների ներքոհիշյալ խմբերի շրջանումտարբեր մեթոդներով (հարցազրույցների անցկացում, հարցաթերթերի լրացում և այլն)՝

- տնօրեն և վարչական աշխատողներ
- ուսուցիչներ
- հաստատության սպասարկող անձնակազմ
- սովորողներ
- ծնողներ

Հարցազրույցների անցկացման հիմնական նպատակն է՝ բացահայտել տարբեր շահառու խմբերի կարծիքը և ստանալ խորքային տեղեկատվություն խնդրո առարկայի կամ ուսումնասիրվող երևույթի վերաբերյալ՝ի հայտ բերելով այնպիսի կողմեր, ինչպիսիք են շահառուների բավարարվածությունը, առկա հիմնախնդիրները, թերությունները և այլն:

4. Հաստատության ներքին գնահատման հաշվետվության կառուցվածքը

Հաշվետվությունըբաղկացած է 6 մասից:

- ✓ Մաս 1-ը ներառում է ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին: Այս մասում հիմնականում արձանագրվում են հաստատության գործունեությունը նկարագրող վիճակագրական տվյալներ, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» հաշվետվության մեջ ներառվող տեղեկատվությանը: Հաշվետվության մեջ տեղ գտած վիճակագրական տվյալները, ինչպես նաև հաստատության գործունեության վերաբերյալ այլ տեղեկատվությունն անհրաժեշտ է ներկայացնել ինչպես տվյալ ուսումնական տարվա համար, այնպես էլ նախորդ 3 տարիների հետ համեմատության մեջ՝ բացահայտելով այս կամ այն ոլորտը նկարագրող ցուցանիշների և չափանիշներիփոփոխության դինամիկան:
- ✓ Մաս 2-ում ներկայացվում ենհաստատության շենքային պայմանները,գույքային ապահովվածությունըսովորողների ու աշխատակազմիանվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը գնահատող ցուցանիշներըև չափանիշները:
- ✓ Մաս 3-ում ներկայացվում են հաստատության գործունեության արդյունավետությունը գնահատող ցուցանիշներըու չափանիշները:
- ✓ Մաս 4-ումներկայացվում են հաստատությունում ներառական կրթությունը և հավասարության ապահովումը գնահատող ցուցանիշներըև չափանիշները:
- ✓ Մաս 5-ումներկայացվում են համայնքային մասնակցությունը գնահատող ցուցանիշները և չափանիշները:
- ✓ Մաս 6-ում ներկայացվում են հաստատության հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաստատության զարգացման ծրագրի մշակման համար:

Յուրաքանչյուր մասումառանձին տեղ է հատկացված եզրակացությունների և մեկնաբանությունների համար:

Յուրաքանչյուր մասում ներկայացվածցուցանիշներին չափանիշների հաշվարկման կամ վերլուծման համարտրված են համապատասխան աղյուսակներ կամ հարցեր, որոնք անհրաժեշտ է լրացնել կամորոնց պետք է պատասխանել: Նշված է նաև, թե հատկապես ինչ մեթոդով է պետք դա կատարել:Հարցումների իրականացման համար առաջարկվող մեթոդաբանությունը տրված է Հավելված 2-ում:

Հաճախ միևնույն ցուցանիշըև չափանիշը կարող է բացահայտվել և'փաստաթղթերը ուսումնասիրելուու վերլուծելու, և' հարցման միջոցով, ուստի ժամանակ և միջոցներ խնայելու համար առաջարկվում էարդյունքների միասնական ամփոփ ձև:

Ցուցանիշներին չափանիշների արձանագրման վերոնշյալ միասնական ամփոփ ձևի կիրառումը չի բացառում դրանց առանձին-առանձին արձանագրումը: Կարևորը հանգամանալից, օբյեկտիվ և հավաստի վերլուծության ապահովումն է:

Հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունը պետք է լինի ամբողջական, համապարփակ և օբյեկտիվորեն արտացոլի հաստատության առկա վիճակը, փոփոխությունների ընթացքը և ուղղությունները: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կատարելիամակցված <u>որակական և քանակական վերլուծություն</u>, ցանկալի է տեղեկատվությունը ներկայացնել աղյուսակների, գրաֆիկներիկամ այլ հնարավոր ձևերով:

Հաշվետվության անհրաժեշտ է նաև նկարագրել հաստատությունում առկա հիմախնդիրները և առաջարկել դրանք լուծելու այնպիսիձևեր, որոնք լինեն իրատեսական, ելնեն հաստատության իրական հնարավորություններից:

Հաշվետվության կազմման ոճը պետք է լինի պաշտոնական, իսկ շարադրանքը՝ պարզ, հասկանալի, տրամաբանական և հնարավորինս հակիրճ:

Որակյալ ու հաստատության համար օգտատակարհաշվետվություն պատրաստելու գլխավոր երաշխիքը հաստատության վարչական աշխատողների և մանկավարժական կոլեկտիվի համագործակցային և թիմային աշխատանքն է, համատեղ որոշումների կայացումն ու իրագործումը:

Հաշվետվության ձև

Մաս 1. Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին[1]

Հաստատության անվանումը,համարը___Արմավիրի մարզ <<Բաղրամյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Հաստատության հասցեն____Արմավիրի մարզ(Վաղ. տարածք) գյուղ Բաղրամյան Կոմիտասի 47

Հաստատության հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն____094611012_____bakhramyan_ejm @mail.ru

Հաստատության ինտերնետային կայքի հասցեն baghramyan-vagharshapat@schools.am

Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2ուստարիների[2] համար

Դասարանների թիվը	2020-2021ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1 -ին դասարան	2	1	2	Աճ
2-րդ դասարան	2	2	1	Նվազում
3-րդ դասարան	1	2	2	Պահպանվել է
4-րդ դասարան	1	1	2	Աճ
5-րդ դասարան	2	1	1	Պահպանվել է
6-րդ դասարան	2	2	1	Նվազում
7-րդ դասարան	2	2	2	Պահպանվել է
8-րդ դասարան	1	2	2	Պահպանվել է
9-րդ դասարան	2	1	2	Աճ
10-րդ դասարան	1	2	1	Նվազում
11-րդ դասարան	2	1	2	Աճ
12 -րդ դասարան	1	2	1	Նվազում
Ընդամենը	19	19	19	Պահպանվել է

Վերլուծել դասարանների թվաքանակի փոփոխության պատճառները և կատարել եզրահանգումներ ու մեկնաբանություններ

Ընթացիկ ուստարվա դասարանների թիվը համեմատած նախորդ ուստարվա հետ պահպանվել է:

Նկատվում է երեխաների աճ

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Աղյուսակ 2. Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Սովորողների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	46	28	45	Աճ
2-րդ դասարան	41	43	27	Նվազում
3-րդ դասարան	34	37	42	Աճ

[1]Մաս 1-ում լրացված տվյալները պետք է համապատասխանեն ՀՀ ԿԳ նախարարության <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին հաշվետվության>> տվյալներին:

[2]Այսևհաջորդող բոլոր աղյուսակներումանհրաժեշտէնկարագրելփոփոխությունների դինամիկան՝ մեկնաբանելաճիկանվազմանպատճառները:

4-րդ դասարան	33	34	38	Աճ
5-րդ դասարան	38	32	35	Աճ
6-րդ դասարան	36	36	33	Նվազում
7-րդ դասարան	38	36	36	Պահպանվել է
8-րդ դասարան	33	39	34	Նվազում
9-րդ դասարան	48	33	37	Աճ
10-րդ դասարան	22	40	21	Նվազում
11-րդ դասարան	32	17	37	Աճ
12-րդ դասարան	17	34	18	Նվազում
Ընդամենը	418	409	402	Նվազում

Վերլուծել ըստ դասարաններիսովորողների թվի փոփոխության պատճառները և կատարել եզրահանգումներ ու մեկնաբանություններ _2022-2023 ուստարում նախորդ ուստարվա համեմատ նկատվում է աշակերտների թվի նվազում:

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Աղյուսակ 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	413	415	411	Նվազում
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	418	409	402	Նվազում
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	10	0	6	Աճ
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	5	6	15	Աճ

Վերլուծել սովորողների թվաքանակի փոփոխության պատճառները և կատարել եզրահանգումներ ումեկնաբանություններ

Ընթացիկ ուստարիների ընթացքում աշակերտական թվի հիմնական փոփոխությունը կապված է շրջանավարտների թվի և առաջին դասարան ընդունվածների թվի տարբերությամբ, ինչպես նաև ավագ դասարաններից շատ թվով աշակերտներ դպրոցից դուրս գալու հետ:

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Աղյուսակ 4. Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ընթացիկ և նախորդ 2ուստարիների համար

Ցուցանիշը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխություն ների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	29	28	29	Աճ
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	20.5	21,32	20,48	Աճ

Վերլուծել ուսուցիչների թվաքանակի ու միջին ծանրաբեռնվածության փոփոխությունների պատճառները և կատարել եզրահանգումներումեկնաբանություններ

Ընդհանուր առմամբ ընթացիկ տարում ուսուցիչների թվաքանակը նվազել է, որի պատճառով միջին ծանրաբեռնվածությունը ընթացիկ ուստարվա ընթացքում աճել է:

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Աղյուսակ 5. Տվյալներ ուսուցիչներիտարիքային բաշխվածության վերաբերյալ՝ընթացիկ և նախորդ 2ուստարիների համար

Ուսուցիչների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	8	2	4	Աճել է
31-ից40 տարեկան	7	9	7	Նվազել է
41ից 50 տարեկան	7	7	6	Նվազել է
51-ից 55 տարեկան	1	3	4	Աճել է
56 տարեկան և ավելի	6	7	8	Աճել է

Վերլուծել ուսուցիչների տարքային կազմը, փոփոխության պատճառները և կատարել եզրահանգումներ ումեկնաբանություններ Ընդհանուր առմամբ վերոնշյալ ուստարիներին ուսուցիչների տարիքային կազմը փոփոխվել է և նկատվում է տարիքային աճ:

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Աղյուսակ6. Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Տնօրեն	Ք. Գալստյան	4	30	
Տնօրենի տեղակալ	Ռ. Գասպարյան	31	36	ՀՀ Արմավիրի մարզպետի պատվոգիր
Տնօրենի տեղակալ	Ն. Հովհաննիսյան	30	35	ՀՀ Արմավիրի մարզպետի պատվոգիր
Հաշվապահ	Շ. Պապիկյան	1	1	
.....				

Աղյուսակ 7.Տվյալներ ուսումնական.հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ

Անուն, ազգանուն, հայրանուն	Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը	Կրթությունը	Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Վարազդատ Մկրտչյան	Արմավիրի մարզպետարան,	Բարձրագույն	2տ	
Սարգսյան Նաիրա	Արմավիրի մարզպետարան, կրթության բաժնի պետ	Բարձրագույն	5տ	
Ռաֆիկ Սահակյան	Արմավիրի մարզպետարան,	Բարձրագույն	5տ	
Գայանե Սարգսյան	Այգեկ համայնքապետարան	Բարձրագույն	2տ	
Արուսյակ Հարություն-յան	ՀՀ ԿԳՄՍ	Բարձրագույն	2տ	
Ադելինա Կիրակոսյան	Գ. Բաղրամյան համայնքապետարան	Բարձրագույն	5տ	
Սիրանուշ Վարդանյան	«Այգեկի Մ. Մովսիսյա-նի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ուսուցիչ	Բարձրագույն	2տ	
Սերինե Հովսեփյան	Անաշխատ	Միջնակարգ	5տ	
Ղուկասովա Անյա	«Այգեկի Մ. Մովսիսյա-նի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ուսուցիչ	Բարձրագույն	2տ	
Հասմիկ Ներկարար-յան	Անաշխատ	Միջնակարգ	2տ	
Լուսինե Սաֆարյան	Անաշխատ	Միջնակարգ	2տ	
Կարինե Ադամյան	«Բաղրամյանի միջն դպրոց» ՊՈԱԿ, Դասվար	Բարձրագույն	2տ	
Լիլիթ Ադամյան	«Բաղրամյանի միջն դպրոց» ՊՈԱԿ, ուսուցիչ	Բարձրագույն	2տ	
Իսկուհի Նիկողոսյան	Անաշխատ	Միջնակարգ	2տ	

Վերլուծել խորհրդի աշխատանքը, խնդիրները և կատարել առաջարկություններ խորհրդի կազմի և գործունեության բարելավման ուղղությամբ Հաստատության կառավարման խորհրդի նիստերը հրավիրվել են ճիշտ ժամանակին ,նիստերի ժամանակ քննարկվել են դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության ոլորտները, ուսումնադաստիարակչական աշխատանքների

կատարումը: Խորհրդի աշխատանքները ավելի արդյունավետ կլինեն,եթե նրանց համար պարբերաբար կազմակերպվեն սեմինարներ՝ իրենց լիազորությունների և խորհրդի աշխատանքների վերաբերյալ գիտելիքների ձեռք բերման համար:

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Մաս 2. Ուսումնական հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

Առողջապահության համաշխարհային կազմակերպության բնորոշման համաձայն՝ առողջությունը ոչ միայն հիվանդությունների բացակայությունն է, այլև անձի հոգևոր, ֆիզիկական, ու սոցիալական լիարժեք բարեկեցությունը: Աճող սերնդի հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը հանրակրթության կարևորագույն նպատակներից է: Ուստիհաստատության խնդիրն է՝ ապահովել անվտանգ ուսումնական գործընթացի իրականացումը և սովորողների հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական լիարժեք բարեկեցությունն ու համակողմանի զարգացումը:

Հաստատության գործունեության լիարժեք գնահատման գործընթացը ներառում է ուսումնական միջավայրի անվտանգության գնահատումը, որը վերաբերում է ոչ միայն սովորողների անվտանգ և առողջ կենսագործունեությանը, այլև ուսուցիչների, վարչականու սպասարկող անձնակազմի աշխատանքի, կյանքի և առողջության պահպանման համար անվտանգ պայմաններ ապահովելուն:

Հաստատությունում սովորողները և աշխատակազմը կարող են հայտնվել արտակարգ կամ վտանգավոր իրավիճակներում, բախվել ամենատարբեր պատահարների, վթարների կամ աղետների հետ:Ուստի, հաստատության ներքին գնահատման գործընթացում անվտանգությանապահովմանը և առողջության պահպահմանը վերաբերող ցուցանիշներիու չափանիշների ներառումը ենթադրում է, որ հաստատությունը պետք է գնահատի սովորողների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, անվտագությանը սպառնացող առկա և հնարավոր վտանգները, միաժամանակ քայլեր ձեռնարկի դրանք վերացնելու ուղղությամբ:

Հաստատությունում սովորողների և աշխատակազմի անվտանգության ապահովումը չի հանդուրժում սպասողական, պասիվ կեցվածք, այլ պահանջում է ակտիվ նախաձեռնողական աշխատանք:

Հաստատությունիր ներքին գնահատման հաշվետվության Մաս 2-ի պատրաստման համար պետք է վարի ինքնավերլուծության հատուկ գրանցամատյանն պահպանիայն թղթայինուէլեկտրոնայինտարբերակներով:

Հաստատությունում սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեության ու առողջության պահպանման գնահատման ցուցանիշները և չափանիշներըդիտարկելով՝թիրախային հաստատությունվերոնշյալ գրանցամատյանում ազատշարադրանքովպետքէնկարագրիիր տարածքի, շենքիուշինությունների, գույքիանվտանգշահագործման, սովորողների և աշխատակիցների անվտանգ կենսագործունեության ապահովման և առողջության պահպանմանհետ կապված վիճակը և առկա խնդիրները:

Գրանցամատյանի լրացման նպատակով ուսումնական հաստատությունը պարբերաբար՝ոչպակաս, քան յուրաքանչյուր ուսումնական կիսամյակըմեկանգամ, պետք է իրականացնի դիտարկում-փաստագրումներ:

Դիտարկում-փաստագրումների իրականացմաննպատակովտնօրենիհրամանովձևավորվում է հանձնախումբ[3]և սահմանվում ժամանակացույց: Դիտարկումների արդյունքում գրանցամատյանում կատարվում են գրառումներ: Դիտարկման շրջայցկատարելիսհանձնաժողովը նկարագրում է առկա իրավիճակը և արձանագրումբացահայտված շեղումներնուանհամապատասխանությունները: Դիտարկումների և գրառումների հիման վրա հաստատությունը կատարում է իրավիճակի վերջնական գնահատում: Վերջինս նպատակահարմար է կատարելնորուսումնականտարվան 2-րդ

[3]Կարելի է ստեղծել մեկ հանձնաժողով՝ ամբողջ ներքին գնահատման հաշվետվության պատրաստման համար

կիսամյակի նախապատրաստականաշխատանքներիշրջանակներում՝ տարեկան2անգամ: Հաստատությունը, ըստանհրաժեշտության, կարողէիրականացնել արտահերթդիտարկում-փաստագրում, որիդեպքումկրկին գրանցամատյանում կատարվում է իրավիճակիարձանագրում:

Հաստատությունում սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեության ու առողջության պահպանման գնահատման ցուցանիշները և չափանիշներըբերված են ստորև:

2.1. Ուսումնական հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը

1. Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:-Ընդհանուր առմամբ հաստատության տարածքը ցանկապատված է, դպրոցի կենտրոնական մուտքը ընդգրկված է ցանկապատի մեջ: Ուսումնական հաստատությունն ունի տարածք՝մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից, -Ընդհանուր առմամբ հաստատությունն ունի առանձին տարածք, մեկուսացված և հեռացված է ավտոճանապարհային գոտուց:Աղմուկի,օդի աղտոտման աղբյուր հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներ դպրոցի հարևանությամբ չկան:
2. Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:-Այո:
3. Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավոր հավաքվում են հատուկ աղբարկղերում և դուրս են բերվում հաստատության տարածքից:-Այո:
4. Ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողներին վտանգավոր միջատների, թափառողների, կատուների և այլ կենդանիների դեմ:-Այո:

2.1 կետում բերված բոլոր հինգ չափանիշներին հաստատության համապատասխանության գնահատումն իրականացվում է դիտարկում-փաստագրում մեթոդով և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ հարցումների միջոցով:

Դիտարկում-փաստագրում իրականացնելիս հաստատությունը պետք է առաջնորդվի համապատասխան նորմատիվային և իր ներքին փաստաթղթերով:Իրավիճակը,ըստվերը բերված 1-ից 3-րդ չափանիշներինկարագրելիս,պետքէօգտվելհաստատությանպլան–հատակագծից: 4-րդ և 5-րդ չափանիշների համարպետք է հիմքընդունել ՀՀ մարզպետների և Երևանի քաղաքապետի որոշումները, ինչպես նաև, առկայության դեքպում, հաստատության կողմից համապատասխան կազմակերպությունների(ախտահարման-կանխարգելման, արտակարգ իրավիճակների ծառայության և այլն)հետ կնքված պայմանագրերը: Համապատասխան փաստաթղթերի առկայության և գործողության ժամկետների, այդ թվում պայմանագրերի պայմանների կատարման մասին պետք է նշվի գարցամատյանում և այնուհետ ներառվի ինքնավերլուծության հաշվետվության մեջ:

2.2. ՈՒսումնական հաստատությունում պահպանված են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ

1. Ուսումնականհաստատության շենքը վերանորոգված է:Մասամբ:
2. Ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին:-Այո:
3. Ուսումնական հաստատության շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:-Այո:
4. Ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով:-մասնակի:
5. Ուսումնական հաստատության շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն):-Մասնակի:

6. Ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային, անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով:-Այո:
7. Ուսումնական հաստատությունում ոչ կառուցվածքային վտանգներ չկան:-Դպրոցում չկան ոչ կառուցվածքային վտանգներ:
8. Ուսումնական հաստատության համակարգչային սարքավորումները, հեռուստացույցները ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին-Հաստատությունում բոլոր սարքավորումները ամուր տեղադրված են:
9. Ուսումնական հաստատության անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին:-Հաստատությունում նման իրեր չկան:
10. Ուսումնական հաստատության կահույքի բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը:- Այո:
11. Ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթեծածկված են ուղեգորգերով, ապա վերջիններս ամրացված են հատակին:-Միջանցքները սայթաքուն են,իսկ գորգեր չկան:
12. Ուսումնական հաստատության ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր:-Չկա:
13. Ոսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:-Այո:

2.2. կետի 1-ից 13-րդչափանիշների համար անհրաժեշտ է իրականացնել դիտարկում-փաստագրում և կատարել համապատասխան գրառումներ գրանցամատյանում:

1-ին չափանիշի համար գրանցամատյանում անհրաժեշտէ արձանագրելիաստատության շենքի ֆիզիկական վիճակը ու նշել, թե ինչպիսի վերանորոգման կարիք ունի այն՝կապիտալ, մասնակի,ընթացիկ: Այնուհետև ցանկալի է մանրամասնել վերանորոգման կարիքները և տալ դրանց մոտավոր ֆինանսական գնահատականը:

2-րդ չափանիշի համար գրանցամանտյանում պետք է արձանագրել, թե արդյոք շենքը կայուն է վտանգների կամ դրանցից որևէ մեկի ազդեցության նկատմամբ (օրինակ՝ ուժեղ քամիներ, սողանքներ, երկրաշարժեր, հրդեհներ, խոնավություն և այլն):

3-ից 13-րդ չափանիշների համար դիտարկում-փաստագրման միջոցով անհրաժեշտ է մեկ առ մեկ անդրադառնալ համապատասխան անվտանգության չափանիշներին և պարզաբանել, թե արդյոքհաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նշված նորմերին:

2.2. կետի հաստատության շենքի և դրա շահագործման անվտանգությունը նկարագրող 4-ից 6 ցուցանիշները և չափանիշները վերաբերում են սովորողների և աշխատակազմի տարհանման պահանջներին և հետևյալն են՝

14. ուսումնականհաստատությունում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները-Հաստատությունում մշակված և առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլան:
15. ուսումնականհաստատության նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով -Այո:
16. ուսումնական հաստատության տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով-Այո:

14-ից16–րդ չափանիշներիհամար ևս պետք է իրականացնել դիտարկում-փաստագրում և հաջորդիվ անդրադառնալ սովորողների և աշխատողների տարհանման խնդրներին: Դիտարկման արդյունքները պետք է գրանցել գրանցամատյանում և կցել տարհանման պլանը:

Ներքին գնահատման նպատակով ինքնավերլուծության հաշվետվության պատրաստման ժամանակ 2.2 կետի չափանիշներինհամապատասխանության դիտարկում իրականացնելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «Շենքերի և

շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար>> շինարարական նորմերի հաստատման մասին» թիվ 253-Ն հրամանը:

2.3. Ուսումնական հաստատության նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշներ և չափանիշներ

Հաստատությունը պահպանում է իր նախագծային հզորությունը:

1. Ուսումնականհաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:-Այո:
2. Ուսումնականհաստատությանդասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում ենառողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին;-Այո:
3. Ուսումնական հաստատության սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացները անցկացնում են մարզադահլիճում:-Այո:

2.3. կետիչափանիշները ինքնավերլուծության հաշվետվությունում ներառելիս պետք է օգտվել ոչ միայն ուսումնականհաստատության շենքի պլան-հատակագծից և դրա հիման վրա կազմված «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»ներկայացվող ամենամյա հաշվետվությունից, այլ նաև պետք է կատարել շրջայցեր, քանի որ միայն չափագրման և հաշվառման եղանակով է հնարավոր պարզել նախագծերից շեղումները և արձանագրելիրական վիճակը: Տվյալ կետի չափանիշներին համապատասխանության վերլուծությունը դյուրինացնելու և կարճ ժամանակահատվածում կատարելու համար առաջարկվում է նախապես պատրաստել և շրջայցերի ընթացքում լրացնել համապատասխան աղյուսակներ: Օրինակ՝ վերը նշված 2-րդ ցուցանիշը արձանագրելու համար անհրաժեշտ է նախապես համարակալել բոլոր դասասենյակները, որպեսզի հնարավոր լինի արագորեն լրացնել աշակերտական նստարանների միջև հեռավորության մեկ միասնական աղյուսակ (տես՝ Աղյուսակ8): Ստորև բերվում են աղյուսակների ձևերը:

Աղյուսակ 8. Տվյալներ դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվ 23.02.2023թ.

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը(շարքերով,շրջանաձև,Т-աձև, П-աձև,խառը)	Սեղան-նստարաններիթիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
Դասասենյակ N1 (Ադամյան Կ.)	35.6	շարքերով	Սեղան-12 Նստարան-12	1մ 20 սմ
Դասասենյակ N2 (Հովհաննիսյան Գ.)	54.9	շարքերով	Սեղան-13 Աթոռ-13	1մ 20 սմ
Դասասենյակ N3 (Կարապետյան Ս.)	53.3	շարքերով	Սեղան-13 Աթոռ-13նստ.	1մ 20 սմ
Դասասենյակ N4 (Մեսրոպյան Գ.)	55	շարքերով	Սեղան-11 Աթոռ-22նստ.	1մ 20 սմ
Դասասենյակ N5 (Ավագյան Գ.)	54.8	շարքերով	Սեղան-12 Նստարան-28	1մ 20 սմ
Դասասենյակ N6 (Զաքարյան Լ.)	52.9	շարքերով	Սեղան-12 Նստարան-24	1մ 20 սմ
Դասասենյակ N7 (Շերոյան Հ.)	35.6	շարքերով	Սեղան-12 Աթոռ-24	1մ 20 սմ
Դասասենյակ N8 (Վարդիկյան Լ.)	12.50	շարքերով	Սեղան-7 Աթոռ-7	60 սմ

Դասասենյակ N9 (Ավետիսյան Ա.)	46.0	շարքերով	Սեղան-13 Աթոռ-26	1մ 20 սմ
Դասասենյակ N10 (Գասպարյան Ի.)	53.5	շարքերով	Սեղան-9 Աթոռ-18 նստ.	1մ 20 սմ
Դասասենյակ N11 (Մխիթարյան Հ.)	62.7	շարքերով	Սեղան-10 Աթոռ-20	1մ 20 սմ
Դասասենյակ N12 (Ավագյան Լ.)	62.2	շարքերով	Սեղան-8 Աթոռ-36	1մ 20 սմ
Դասասենյակ N13 (Գասպարյան Ս.)	52.4	շարքերով	Սեղան-10 Աթոռ-20	1մ 20 սմ
Դասասենյակ N14 (Դարմոյան Ա.)	52.7	շարքերով	Սեղան-10 Աթոռ-20	1մ 20 սմ
Դասասենյակ N15 (Փիլիպոսյան Լ.)	63	շարքերով	Սեղա-17 Աթոռ-33	1մ 20 սմ
Դասասենյակ N16 (ԻՄանուկյան Հ)	55.9	շարքերով	Սեղան-12 Աթոռ-23	1մ 20 սմ
Դասասենյակ N17 (Պապյան Թ.)	46	շարքերով	Սեղան-11 Աթոռ-22	1մ 20 սմ
Դասասենյակ N18 (Ադամյան Լ .)	54.2	շարքերով	Սեղան-10 Աթոռ-22	1մ 20 սմ
Դասասենյակ N19 (Աղաջյան Վ.)	61	շարքերով	Սեղան-8 Աթոռ-12	1մ 20 սմ

Կարելի է կցել դասասենյակների և դրանցում սեղան-նստարանների դասավորվածության գծագրերը՝ նշելով հեռավորությունները:

Հիմնավորել սեղան-նստարանների դասավորության նախընտրելի ձևի պատճառները: Կատարել եզրահանգումներ և մեկնաբանություններ դասասենյակների կահավորման առավել նպաստավոր ձևերի վերաբերյալ՝ ուսուցման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու և դասապրոցեսի ընթացքում ինտերակտիվ մեթոդներ կիրառումը խթանելու նպատակով:

Հիմնականում սեղան-աթոռները դասավորված են շարքերով,շարքերի միջին հեռավորությունը կազմում է 1 մ., իսկ սեղանների միջին հեռավորությունը սմ. :Կահավորումը հարմարեցված է դասարանի չափերի հետ: (անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Աղյուսակ9. Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակներում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվ 23.02.2023 թ.

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սովորողին ընկնող մակերեսը(քմ)	Նորմերից պակաս կամ ավել մակերեսը (քմ)
Դասասենյակ N1	35.6	1.54	0.46 պակաս
Դասասենյակ N2	54.9	2.19	0,19ավել
Դասասենյակ N3	53.3	2.13	0,13 ավել
Դասասենյակ N4	55	2.61	0,61 ավել
Դասասենյակ N5	54.8	1.88	0,12 պակաս
Դասասենյակ N6	52.9	2.2	0,2 ավել
Դասասենյակ N7	35.6	1.54	0.46 պակաս

Դասասենյակ N8	12.5	0.89	1 .11 ավել
Դասասենյակ N9	46	1.84	0.16պակաս
Դասասենյակ N10	53.5	2.97	0.97ավել
Դասասենյակ N11	62.7	3.3	1.3 ավել
Դասասենյակ N12	62.2	1.72	0.28պակաս
ԴասասենյակN 13	52.4	2.75	0,75 ավել
Դասասենյակ N14	52.7	3.1	1.1ավել
Դասասենյակ N15	63	1.9	0.1պակաս
Դասասենյակ N16	55.9	2.66	0.66ավել
Դասասենյակ N17	46	2.19	0,19 ավել
Դասասենյակ N18	54.2	2.46	0.46 ավել
Դասասենյակ N19	61	4	2 ավել

Վերլուծել դասասենյակներում մեկ սովորողին ընկնող մակերեսին վերաբերողիրավիճակը և կատարել եզրահանգումներ:

Հաստատությունում գործող 19 դասարաններից տասներեքում մեկ սովորողին ընկնող քառակուսու չափաբաժինը ավել է սահմանված նորմից, իսկ վեց դասարաններում սահմանված նորմից փոքր-ինչ ցածր է,ինչը կապված է հաստատությունում մեծ դասարաններ չլինելու հետ :

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

2.4. Ուսումնական հաստատության անձնակազմի և սովորողների անվտանգ կենսագործունեությունը նկարագրող չափանիշներ

Ուսումնական հաստատությունն իրականացնում է նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների շրջանում անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

1. Ուսումնականհաստատության անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին:-Այո:
2. Ուսումնականհաստատության անձնակազմը և սովորողները տեղեկացված են հաստատությունումառկա անվտանգության միջոցների(էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն)գտնվելու տեղերի վերաբերյալ ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին:-Այո:
3. Ուսումնականհաստատությունումիրականացվում են տեղականվտանգներիգնահատմաննաղետներիպատրաստվածությանվերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ:-Այո:
4. Ուսումնականհաստատությունում առկա է աղետների պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանվածության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը , իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամանտյան:-Այո:

5. Ուսումնականհաստատությունապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով:-Այո:
6. Ուսումնականհաստատությանբոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:-Այո:
7. Ուսումնականհաստատությանմիջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:-Այո:
8. Ուսումնականհաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով:-Այո:
9. Ուսումնականհաստատությանբոլոր հարկերում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ՝ տղաների և աղջիկների համար:-Հաստությունում տղաների և աղջիկների համար առանձնացված սանհանգույցեր գործում են միայն առաջին հարկում:
10. Ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն):-Այո:
11. Հաշմանդամություն ունեցող անձանց համար ուսումնական հաստատությունումկա հարմարեցված սանգանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը:-Ոչ:
12. Ուսումնականհաստատությունում առկա է սննդի կետ, որը համապատասխանում է սանտարահիգիենիկ պայմաններին:-Այո:
13. Ուսումնականհաստատության սննդի կետում փակցված են առողջ աննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ:-Այո:
14. Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն:-Հաստատությունում չնայած առանձին բուժկետ չկա,սակայն առաջին բուժօգնության համար կան բոլոր պարագաները:

2.4 կետի թվով 14 չափանիշներիամբողջությունը հիմք է հանդիսանում ուսումնական հաստատության ինքնավերլուծության հաշվետվության այս բաժինը կազմելու համար: Առավել ընդգրկուն և համակողմանի վերլուծություն կատարելու համար յուրաքանչյուր չափանիշին պետք է անդրադառնալ առանձին, այնուհետև՝ ընդհանրացնել դրանք: Այս բաժնի վերլուծությունը կատարելիս պետք է ոչ միայն ուսումնասիրել համապատասխան ներքին փաստաթղթերի առկայությունը և կատարել դիտարկում-փաստագրում ըստ յուրաքանչյուր չափանիշի, այլ նաև կազմել իրավիճակի ուսումնասիրման հարցաշարեր և դրանցմիջոցով կատարել հարցումներ հաստատության սովորողների, ուսուցիչների և աշխատակազմի շրջանում: Ելնելով հարցերի բնույթից՝ հարցումներ կարելի է կատարել նաև ծնողների կամ այլ շահառուների շրջանում:

Դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները հաստատության գրանցամատյանում ներառելու և այնուհետև ինքնավերլուծության հաշվետվության մեջ ներկայացնելու նպատակով առաջարկվում են ստորև բերված աղյուսակները՝ ըստ առանձին չափանիշների:

Չափանիշներ 1 և 2

Աղյուսակ 10. Տվյալներ արտակարգ իրավիճակներում հաստատության անձնակազմի և սովորողների տեղեկացված լինելու մասին

Դիտարկման ամսաթիվ -- 20.05.2023 --

N	Չափանիշը	Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին(գրել փաստաթղթի անվանումը և ընդունման ամսաթիվը, թվարկել առկա գույքը) Արձանագրել իրավիճակը
1.	Ուսումնականհաստատության աշխատակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին	Քաղպաշպանության ծրագիր
2.	Ուսումնականհաստատության աշխատակազմը և սովորողները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակի, հրշեջ տեղեկատուի, հրշեջ ծորակի և այլն) տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման	Հաստատությունում առկա է քաղպաշտպանության ծրագիր,տարհանման պլան, աղետների ռիսկերի նվազեցման պլան:

	կանոններին	

Այս չափանիշներիամբողջական ներկայացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ և դրանց արդյունքները հակիրճ ներկայացնելըստ հարցման մեջ ընդգրկված յուրանքանչյուր շահառու խմբի

_____Ուսուցիչներ- տեղեկացված են արտակարգ իրավիճակներում գործելու մասին:

Աշակերտներ-գիտեն ինչպես գործեն արտակարգ իրավիճակների ժամանակ:

_____

_____

_____

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Չափանիշ 3

Աղյուսակ 11. Տվյալներ տեղական վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության ու հակազդման մեխանիզմների ուղղությամբ հաստատությունում իրականացվող միջոցառումների վերաբերյալ

Ամսաթիվը	Դասարանը	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված ուսումնական նյութերը և պարագաները	Մասնակից սովորողների և աշխատակիցների թիվը
19.04.2023	1-12-րդ դասարան	Տարհանում	442

Անցկացված միջոցառումների արդյունավետության գնահատման նպատակով ցանկալի է իրականացնել հարցումներ սովորողների և հաստատության աշխատակիցների շրջանում և դրանց արդյունքները հակիրճ ներկայացնել ըստ հարցման մեջ ընդգրկված յուրանքանչյուր շահառու խմբի:

___Աշխատողներ-կատարված աշխատանքները գնահատվել են լավ:

Աշակերտներ-կարողացել են ստացած գիտելիքները իրագործել պրակտիկայում:

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Չափանիշ 4

Ինքնավերլուծության այս մասի կարևորագույն բաղադրիչ է հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանի վերլուծությունը: Նման պլանի առկայությունը, ինչպես նաև դրանում նշված աղետներին պատրաստվածության, հակազդման իրատեսական մեխանիզմներիու միջոցառումների նկարագրությունը հաստատության անվտանգության և ապահովության կարևոր չափանիշներից է:

Այս չափանիշին հաստատության համապատասխանության գնահատման նպատակով առաջարկվում է լրացնել Աղյուսակ 12-ը, որի մեջ անհրաժեշտ է նշել, թե արդյոք ուսումնականհաստատությունը մշակել և հաստատել է իր քաղաքացիական պաշտպանության պլանը, ինչպես է իրագործվում այդ պլանը: Բացի այդ անհրաժեշտ է նկարագրել սովորողների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվողայն միջոցառումների և վարժանքների մասին, որոնքբխում են քաղաքացիական պաշտպանության պլանից: Կարևոր է նաև հիշատակել, թե արդյոք դպրոցը վարում է իրականացվող վարժանքների և միջոցառումների գրանցամատյան:

Աղյուսակ 12. Տվյալներ ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանից բխող սովորողների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների և վարժանքների վերաբերյալ

Ամսաթիվը	Դասարանը	Միջոցառման/վարժանքի անվանումը, նկարագիրը և օգտագործված	Մասնակից սովորողների և

		պարագաներն ու ուսումնական նյութերը	աշխատակիցների թիվը
07.12.2022	1-12-րդ դասարան	Ինչպես գործել երկրաշարժի ժամանակ	425
04.03.2023	1-12-րդ դասարան	Ինչպես պաշտպանվել արտակարգ իրավիճակների ժամանակ	421
01.03.2023	10-12-րդ դասարան	Արտակարգ իրավիճակներում վթարափրկարարական աշխատանքների կազմակերպում	78
02.03.2023	1-12-րդ դասարան	Ինչպես գործել հակառակորդի կողմից հանկարծակի հարձակման վտանգի ժամանակ	422

Անցկացված միջոցառումների և վարժանքների արդյունավետության գնահատման նպատակով ցանկալի է իրականացնել հարցումներ սովորողների և աշխատակիցների շրջանում և դրանց արդյունքները հակիրճ ներկայացնել՝ ըստ հարցման մեջ ընդգրկված յուրանքանչյուր շահառու խմբի:

__Աշխատողներ- կատարված աշխատանքները գնահատել են լավ :

Աշակերտներ- կարողացել են գիտելիքները կիրառել պրակտիկայում:

_____

_____

_____(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Չափանիշներ 5-7

Չափանիշներ 5-ից 7-ը անրադառնում են հաստատության շենքի ջեռուցման պայմաններին: Դրանց հաստատության համապատասխանության գնահատման նպատակով անհրաժեշտ էկատարել դիտարկում-փաստագրում և լրացնել ստորև բերված Աղյուսակ 13-ը: Դիտարկման արդյունքները պետք է ամփոփել հաստատության ներքին գնահատման հաշվետվության մեջ:

Աղյուսակ13. Տվյալներ ուսումնական հաստատության շենքի ջեռուցման պայմանների մասին

Դիտարկման ամսաթիվ -----22.02.2023թվական----------

Ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով (ընտրել այո կամ ոչ այունակը)			
Այո		Ոչ (նկարագրել թե ինչպես է ջեռուցվում հաստատության շենքը)	
Դասասենյակները, դահլիճները, այլ սենյակները, միջանցքները և այլն	Ջեռուցման ձևը, (վառելիքի տեսակը)	Ջերմաստիճանը շրջայցի պահին	Ջեռուցման ժամերը
Դասասենյակ N1	Լոկալ	20	06:00-15:00
Դասասենյակ N2	Լոկալ	20	06:00-15:00
Դասասենյակ N3	Լոկալ	21	06:00-15:00

Դասասենյակ N4	Լոկալ	21	06:00-15:00
Դասասենյակ N5	Լոկալ	21	06:00-15:00
Դասասենյակ N6	Լոկալ	21	06:00-15:00
Դասասենյակ N7	Լոկալ	20	06:00-15:00
Դասասենյակ N8	Լոկալ	21	06:00-15:00
Դասասենյակ N9	Լոկալ	21	06:00-15:00
Դասասենյակ N10	Լոկալ	21	06:00-15:00
Դասասենյակ N11	Լոկալ	20	06:00-15:00
Դասասենյակ N12	Լոկալ	21	06:00-15:00
Դասասենյակ N13	Լոկալ	22	06:00-15:00
Դասասենյակ N14	Լոկալ	21	02:00-15:00
Դասասենյակ N15	Լոկալ	20	02:00-15:00
Դասասենյակ N16	Լոկալ	21	02:00-15:00
Դասասենյակ N17	Լոկալ	21	02:00-15:00
Դասասենյակ N18	Լոկալ	20	02:00-15:00
Դասասենյակ N19	Լոկալ	20	02:00-15:00
Մարզադահլիճ	Լոկալ	18	02:00-15:00
Միջոցառումների դահլիճ	Չի ջեռուցվում		
Ուսուցչանոց	Լոկալ	21	02:00-15:00
Գրադարան	Լոկալ	20	02:00-15:00
Ճաշարան	Լոկալ	20	02:00-15:00
1-ին հարկի միջանցքներ	Լոկալ	20	02:00-15:00
2-րդ հարկի միջանցքներ	Լոկալ	20	02:00-15:00

Վերլուծել ջեռուցման հետ կապված վիճակն ու խնդիրները և կատարել եզրահանգումներ ու առաջարկություններ:

Հաստատությունն ունի լոկալ ջեռուցում, բոլոր դասարաններում ջերմաստիճանը համապատասխանում է սահմանված նորմին, միայն հանդիսությունների սրահում չի ջեռուցվում(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Չափանիշներ 8-11

Չափանիշներ 8-ից 11-ը անրադառնում են հաստատության ջրամատակարարմանը և սանհանգույցներին, որոնց հաստատության համապատասխանության գնահատումը պետք է իրականացնել դիտարկում-փաստագրման միջոցով: Ստորև բերված Աղյուսակ 14-ի լրացման միջոցով, պետք է մանրամասնել սանհանգույցների առկայությունը, դրանց վիճակը և անհրաժեշտ հիգիենայի պարագաների առկայությունը,հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված սանհանգույցի առկայությունը և այլն: Դիտարկման արդյունքները պետք է ամփոփել հաստատության ներքին գնահատման հաշվետվության մեջ:

Աղյուսակ 14. Տվյալներ ուսումնական հաստատության ջրամատակարարման, սանհանգույցների(կոյուղացման) առկայության և դրաց վիճակի վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվ 08.02.2023 թվական

Հաստատության ջրամատակարարումը (լրացնել համապատասխան այունակը)		
Ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Ապահովված է հոսող խմելու ջրով, բայց ոչշուրջօրյա	Ապահովված չէ հոսող խմելու ջրով
	Օրեկան քանի՞ ժամ է ջրամատակարարումը -24	(նկարագրել խնդիրը)
այո	այո	(պարզաբանել ինչպե՞ս է լուծվում ջրամատակարաման հարցը)

Հաստատության սանհանգույցները և դրանց վիճակը						
Շենքի հարկը	Սանհանգույցների թիվը	Աղջիկների սան-հանգույցի առկայությունը(ընդգծել այո կամ ոչ բառերը)	Տղաների սան-հանգույցի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Հիգիենայի պարագաների առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Հարմարեցվածությունը հաշմանդամությունունեցող անձանց կարիքներին (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Վերանորոգված են, թե ոչ(ընդգծել այո կամ ոչ բառերը)
1-ին հարկ	7	Այո Ոչ	Այո Ոչ	Այո Ոչ	Այո Ոչ	Այո Ոչ
2-րդ հարկ	-					

Վերլուծել ջրամատակարարման և սանհագույցների հետ կապված վիճակն ու խնդիրները և կատարել եզրահանգումներ ու մեկնաբանություններ: Հաստատությունում սանհանգույցները գործումեն միայն առաջին հարկում:Առանձնացված են տղաների և աղջիկների համար նախատեսված սանհանգույցները:Նույն կերպ է գործում անձնակազմի համար նախատեսված սանհանգույցը:Սանհանգույցները գտնվում են բարեկարգ վիճակում,ապահովված են մշտական ջրով: _____(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Չափանիշներ 12 - 13

12 և 13 չափանիշները վերաբերում են սննդի կետի առկայությանը ուսումնականհաստատությունում: Այս չափանիշներին հաստատության համապատասխանության գնահատումը պետք է իրականացնել դիտարկում-փաստագրման միջոցով: Ատորև բերված Աղյուսակ 15-ի լրացման միջոցով հաստատության գրացամատյանում նախ պետք է նշել արդյոք հաստատությունն ունի գործող սննդի կետ,թե ոչ: Եթե հաստատությունը չունի գործող սննդի կետ, ապա պետք է նկարագրել, թե ինչպես է կազմակերպվում սովորողների և աշխատակիցների սննդի ապահովման խնդիրը, երբ նրանք գտնվում են հաստատությունում: Այնուհետ, պետք է մանրամասնել սննդի կետի վիճակը և հագեցվածությունը անհրաժեշտ գույքով և պարագաներով:

Դիտարկման արդյունքները պետք է ամփոփել հաստատության ներքին գնահատման հաշվետվության մեջ:

Աղյուսակ 15. Տվյալներ ուսումնականհաստատությունում սննդի կետի առկայության և սննդի կազմակերպման վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվ 08.02.2023

Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ, թե ոչ (ընտրել այո կամ ոչ սյունակը)	
Ոչ	(նկարագրել, թե ինչպես է կազմակերպվում սովորողների և աշխատակիցների սննդի ապահովման խնդիրը)
Ուսումնականհաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ, թե ոչ (ընտրել այո կամ ոչ սյունակը)	
Ոչ	

Նկարագրել սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության					
Սննդի կետի տեսակը (բուֆետ, ճաշարան)	Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը և տարածքը (քմ)	Սառը և տաք հոսող ջրի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը(ընդգծել այո կամ ոչ բառերը)	Տաք սննդի հնարավորությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Վերանորոգված է, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը)
Ճաշարան	54 քմ	Այո Ոչ	Այո Ոչ	Այո Ոչ	Այո Ոչ

Վերլուծել սննդի կետի առկայության և դրա վիճակի հետ կապված խնդիրները և կատարել եզրահանգումներ ու առաջարկություններ:

Հաստատության սննդի կետը բարեկարգ վիճակում է:Հիմնական խնդիրը կապված է օդափոխիչ համակարգի հետ,քանի որ սննդի կետում չկա օդափոխիչ համակարգ: (անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր):

Չափանիշ 14

1. սովորող-ուսուցիչ հարաբերությունը
2. սովորող - սպասարկող-վարչական անձնակազմ հարաբերությունը
3. դասարանների միջին խտությունը
4.մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը
5. ուսուցչների միջին աշխատավարձը
6. վարչական աշխատողների միջին աշախատավարձը
7. սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը
8. հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը
9. ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը
10. հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը
11. աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը
12.կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը
13. նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը

[5](«Key education indicators on social inclusion and efficiency»European Research Associates)»

3.4 կետում բերված հաստատության ներքին արդյունավետության ցուցանիշների հաշվարկը կատարելու և դրանք ամփոփելու նպատակով ստորև տրվում են Աղյուսակներ 26 և 27-ը:

Աղյուսակ 26. Ուսումնական հաստատության ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշները՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշներ	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորող/ուսուցիչ հարաբերությունը (հաշվարկ.հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին)	13,06	12,03	13,86	Աճ
Սովորող/ սպասարկող անձնակազմ հարաբերությունը (հաշվարկ.հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունըսպասարկող անձնակազմի ընդհանուր թվին)	52,25	37,18	36.54	նվազում
Դասարանների միջին խտությունը (հաշվարկ.հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը /կոմպլեկտավորված դասարանների ընդհանուր թվին)	22	22	21,15	Նվազում
Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը (հաշվարկ.հաստատության տարեկան բյուջեով հաստատված ամբողջ գումարի հարաբերությունը հաստատության սովորողների ընդհանուր թվին)	208,8	213,0	219.3	Աճ
Սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը	936,9	1072,1	85581,1	Աճ
Ուսուցիչների միջին աշխատավարձը		57819	100279,1	Աճ
Վարչական աշխատողների միջին աշախատավարձը		176794	176794	Պահպանում

Աղյուսակ 27. Տվյալներ հաստատության բյուջետային միջոցների վերաբերյալ

	2020-2021թ.	2021-2022թ.	2022-2023թ.
Հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը (հաշվարկ. հաստատության տարեկանբյուջեում արտաբյուջետային միջոցների չափի և հաստատությանտարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)	0	0	0
Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը	0	0	0
Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը (հաշվարկ. ծնողների կողմից տարվա կտրվածքով կատարած ներդրումների, դրամաշնորհների և հաստատությանտարեկան բյուջեում)	367,4	0	350,7
Աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը(հաշվարկ. աշխատավարձերի վճարման հոդվածով՝ ներառյալ հարկերը, հաստատության տարեկան	0,71	0,96	89,88

ծախսերի գումարի և հաստատությանտարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)			
Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը (հաշվարկ. կոմունալ վճարների հոդվածով հաստատության տարեկան ծախսերի գումարի և հաստատությանտարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)	0,005	0,7	5,23
Նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը (հաշվարկ. գույքի ձեռբերման հոդվածովհաստատության տարեկան ծախսերի գումարիև հաստատությանտարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)	0,07	0,12	0.467

Վերլուծել հաստատության ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշների փոփոխությունների դինամիկան և կատարել եզրահանգումներ դրանց բարելավման վերաբերյալ:

Հաստատության ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշներում առկա են և՛ աճի ,և՛ նվազման միտումներ: Դա կապված է աշակերտական թվի թե՛ աճի,թե՛ նվազման հետ:

___(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր).

Մաս. 4. Ուսումնական հաստատությունում ներառական կրթության և հավասարության ապահովում

ՀՀ Սահմանադրության հոդված 14.1.-ում ամրագրված է, որ«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև. խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Ներառական կրթության հիմքում ընկած է մարդկանց հավասար իրավունքների վերոնշյալ սահմանադրական դրույթը և կրթություն ստանալու մարդու հիմնարար իրավունքը, որն արտացոլված է ՀՀ Սահմանադրության հոդված 35-ում, ըստ որի.

«Յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: Ոչ պետական ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:»

Կրթություն ստանալու մարդու իրավունքն ամրագրված է նաև 1948 թվականին ընդունված ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում» (հոդված 26), համաձայն որի.

«Յուրաքանչյուր ոք կրթության իրավունք ունի: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, իսկ բարձրագույն կրթությունը, ընդունակություններին համապատասխան, հավասարապես մատչելի բոլորի համար»:

Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ուհիմնարարազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, է՛լ ավելի նպաստի ՄԱԿ-

իխաղաղապահգործունեությանը: Ծնողներն իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունք ունեն»:

Նույնքան կարևոր են 1989 թվականին ընդունված ՄԱԿ-ի <<Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի>> հոդված 28-ի դրույթները երեխայի կրթության իրավունքի մասին, համաձայն որի.

«Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի կրթության իրավունքը և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես.

(ա) մտցնում են պարտադիր և անվճար տարրական կրթություն,

(բ) խրախուսում են միջնակարգ կրթության տարբեր ձևերի, ներառյալ՝ ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացումը, ապահովում են դրանց մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթություն տրամադրելը և կարիքի դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը,

(գ) բոլոր համապատասխան միջոցներով ապահովում են բարձրագույն կրթության մատչելիությունը՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների,

(դ) ապահովում են կրթական և մասնագիտական տեղեկատվության և ուղեցույցների մատչելիությունը բոլոր երեխաների համար,

(ե) միջոցներ են ձեռնարկում նպաստելու կանոնավոր դպրոց հաճախելուն և դպրոցը թողած սովորողների թվաքանակի նվազմանը:

Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները երաշխավորելու համար, որ դպրոցական կարգապահությունն իրականացվում է երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով և սույն Կոնվենցիային համապատասխան:»

Ինչպես նաև հոդված 29-ի հետևյալ դրույթները.

«Երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի.

(ա) երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով,

(բ) մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը,

(գ) երեխայի ծնողների, նրա մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, երեխայի բնակության երկրի ազգային արժեքների, նրա ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը,

(դ) երեխային ազատ հասարակության մեջ, փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելը,

(ե) շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը»:

Երեխայի կրթության իրավունքը ամրագրված է նաև ՀՀ մի շարք օրենքներում, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության մասին» և այլն: Մասնավորապես «Կրթության մասին>> ՀՀ օրենքի 6-րդհոդվածում ամրագրված է.

«Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնական գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ»:

Ներառականության հարցը պետք է նախ և առաջ դիտարկվի 1990 թվականին Ջոմթիենում ընդունված <<Կրթություն բոլորի համար>>համաշխարհային հռչակագրի համատեքստում, որի 6 նպատակներից 2-ը հետևյալն են. համընդհանուր ընդգրկվածությունըև հավասարությունը՝ որպես թիրախ:

Ներառականության սկզբունքը սահմանված է 2005 թվականին ընդունված «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձնաց կրթության մասին» ՀՀ օրենքում, որը կարգավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, իրենց

ընդունակություններին և կարողություններին համապատասխան, կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման բնագավառում հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Համաձայն օրենքի՝ «ներառականկրթությունը՝կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթականն մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»

Ներառական կրթության պարագայում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ, որը հանգեցնում է ստեղծագործական հնարավորություններով ու ինքնուրույն գործելու պատրաստ մարդու ձևավորմանը։ Երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի միջավայրի հետ շփումից, քանի որ նույն միջավայրը հանդուրժողականությամբ է վերաբերում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու փաստը։ Ընտանիքի հետ տարվող մասնագիտացված աջակցության ծառայությունները և միջավայրի վերաբերմունքը օգնում են ծնողին ավելի օգտակար լինել իր երեխային, դուրս գալ անելանելիության բարդույթից և օգնել իր երեխային հաղթահարելու անհատական ուսուցմանպլանը։

Ներառական կրթության պարագայում պետությունը աստիճանաբար իրականացնում է սոցիալական հավասարության ապահովման խնդրում իր դերակատարումը՝ նվազեցնում է հասարակության շերտավորումըու նպաստում նրա հոգեբանական առողջացմանը, հասնում է բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային բաշխմանը, քանի որ հատկացումները կատարվում են ավելի մեծ թվով երեխաների կրթությունը կազմակերպելու համար:

Ի վերջո, ներառական կրթությունը նպաստում է երկրում կրթության կազմակերպման և իրականացման մեխանիզմների արդիականացմանը՝ համաշխարհային զարգացման ժամանակակից միտումներին և մարտահրավերներինհամահունչ:

Ասպիսով, ներառական կրթությունը, ենթադրում է հաստատություններում այնպիսի կրթական միջավայրի և պայմանների ստեղծում, որոնցում բոլոր երեխաները, անկախ իրենց առանձնահատուկ կրթական կարիքներից, ունեն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ: Նման միջավայրը պետք է լինի երեխաներին ներառող, կրթություն ստանալու համար արդյունավետ, երեխաների նկատմամբ բարյացկամ, նրանց առողջության համար ապահով ուանվտանգ: Ներառումը ենթադրում է կրթության առավել լայն տեսլական, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ՝

- հաշմանդամություն ունեցող երեխաները
- բռնության ենթարկվող երեխաները
- աշխատող երեխաները
- փախստական կամ տեղահանված երեխաները
- միգրանտները
- ծայրահեղ չքավորության մեջ ապրող երեխաները
- լեզվական փոքրամասնությունները
- ազգային փոքրամասնությունները
- հակամարտությունների գոտիների երեխաները
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և այլ հիվանդությունների հետևանքները կրող երեխաները և այլն

Ուսումնական հաստատությունում բոլոր երեխաների մոտ պետք է ձևավորվեն այնպիսի հմտություններ, վերաբերմունք և արժեհամակարգ, ինչը նրանց թույլ կտա հաստատությունն ավարտելուց հետո, չափահաս կյանքում իրենց լիովին դրսևորել և ինքնահիրացվել:

Հավասարության սկզբունքը իր մեջ ներառում է նաև տարբեր սեռերի, ազգային փոքրամասնությունների, սոցիալական տարբեր կարգավիճակի ընտանիքների երեխաների հավասարությունը: Հայաստանի, ինչպես և ընդհանրապես ժողովրդավարական պետությունների օրենսդրությունները, ամրագրում են սեռերի հավասար իրավունքները, պարտականությունները և ազատությունները: Սեռերի հավասարության սկզբունքներն ամրագրված են ՀՀ մի շարք օրենքներում, նաև՝ ՀՀ Աշխատանքային օրենսգրքում:

Հաստատությունում ներառական կրթության և սովորողների միջև հավասարության ապահովման ինքնագնահատումն ուղղված է բացահայտելու, թե արդյոք հաստատությունն ապահովում է ակնկալվող հետևյալ արդյուքները.

- հաստատությունընդունվելուևհաստատությունում սովորելու համար ստեղծված են հավասար պայմաններ բոլոր երեխաների համար՝ անկախնրանց կարիքներից, կարողություններից ևսոցիալական անապահովության աստիճանից
- հաստատությունապահովումէբոլորսովորողներիհավասարմասնակցությունուսումնառությանգործընթացին՝անկախնրանցկարիքներից, կարողություններիցևսոցիալականանապահովությանաստիճանից
- հաստատությունապահովումէբոլորսովորողներիհամարկրթությանարդյունքներինհասանելուևառաջադիմությանցանկալիմակարդակը՝անկախ նրանցկարիքներից, կարողություններիցևսոցիալականանապահովությանաստիճանից:

Ուսումնական հաստատությունում ներառական կրթության և հավասարության ապահովումը նկարագրող հիմնական ցուցանիշները չափանիշները հետևյալ են՝

1. ներառական կրթության զարգացումըորպես նպատակ ամրագրվածհաստատության զարգացման ծրագրում
2. ուսումնականհաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովման համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստումներ
3. ուսումնականհաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով օժտված տեղակալ(կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին)
4. ուսումնականհաստատության վեբ կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ
5. ուսումնականհաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր

Ուսումնական հաստատությունում աշխատակազմն արդիականացնում է իր գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում.

6. վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստման
7. ուսումնականհաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված ուսուցիչներ:
8. վերջին 5 տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը-29:

Ուսումնական <u>հաստատությունն</u> ունի ռեսուրսներ՝ աջակցելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք(ԿԱՊԿ) ունեցող երեխաների սովորելուն, և ուսումնական միջավայրը հարմարեցված է նրանց կարիքներին.

9. ուսումնականհաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող <u>անձանց</u> համար ապահովված չէ ֆիզիկական մատչելիություն
10. ուսումնականհաստատությունն ունի ԿԱՊԿ ունեցող սովորողներիհոգեբանամանկավարժական աջակցության թիմ (սոցիալական աշխատող, հոգեբան, ուսոցչի օգնական և այլն)
11. ԿԱՊԿ ունեցող սովորողներն ապահովված են դասագրքերով, գրենական պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով

12. ուսումնականհաստատությունում առկա չեն ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ՝ լսողության ու տեսողության գործառույթի բացակայության կամ սահմանափակում ունեցող սովորողների համար
13. ուսումնական հաստատության դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ ԿԱՊԿ ունեցող սովորողները մեկուսացված չեն.
14. ուսումնականհաստատությունն ունի ռեսուրս-սենյակ՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար.
15. ուսումնական հաստատության ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿունեցողսովորողներիթիվըև տոկոսը -1 աշակերտ, 0,25 ‰
16. ուսումնական հաստատության ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿունեցող սովորողներիծնողների(խնամակալների) թիվը-2
17. ուսումնականհաստատությունում հաղթահարված չեն ներառականությունը խաթարող ֆիզիկական խոչընդոտները(թեքահարթակ, հենակ և այլն).
18. ուսումնականհաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները(վերաբերմունք, կարծրատիպ):

Ուսուցիչները կարողանում են ուսումնական ծրագիրը, դասի պլանը,ուսուցանման գործընթացը հարմարեցնել ԿԱՊԿունեցողերեխաների կարիքներին և մշտապես խրախուսում են նրանց.

19. անհատական ուսումնական պլանները,մշակվումեն համաձայնհանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելովսովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը
20. այնուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ
21. ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր
22. ուսուցիչները ունեն հավասար վերաբերմունք բոլոր երեխաների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից
23. ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամերևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում և նույնիսկ սեփական վարքագծում

ԿԱՊԿ ունեցող երեխաների հավասարապես մասնակցում են դպրոցի և դասի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի

24. ուսումնականհաստատության այն սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ունենԿԱՊԿ
25. ուսումնականհաստատությունիցհեռացած (ուսումն անավարտ թողած)ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը և տոկոսը
26. ԿԱՊԿ ունեցող սովորողների բացակայությունների տարեկանմիջին թիվը՝ժամ/սովորող
27. արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿունեցող սովորողներիթիվըև տոկոսը
28. ուսումնականանհաստատության աշակերտական խորհրդում ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը

Ուսումնական հաստատության սովորողները գիտակցում են ԿԱՊԿ ունեցող իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման անհրաժեշտությունը և օգնում են փոխել դրանք

29. ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունների թիվը և ձևերը
30. ուսումնականհաստատության կայքում և (կամ) աշակերտական թերթում ԿԱՊԿ ունեցող սովորողների կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստվածնյութերի, հոդվածների, լուսանկարների և այլ հրապարակումների թիվը:

Ուսումնական հաստատությունում ապահովված է սեռերի և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը

31. սեռերի հավասարության գործակիցը
32. աշակերտական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը
33. գերազանց տարեկանառաջադիմություն ունեցող տղաների թվի հարաբերությունը գերազանցառաջադիմություն ունեցողաղջիկների թվին
34. տարեկանանբավարար գնահատական(գնահատականներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարարար գնահատական(գնահատականներ) ունեցող աղջիկների թվին
35. տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունն աղջիկներիտարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով)
36. «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա» և «Կենսաբանություն»առարկաներից տղաների և աղջիկների տարեկան միջին առաջադիմությունը
37. ուսումնականհաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը
38. աշակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը
39. ուսումնականհաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների միջին տարեկան առաջադիմությունը
40. անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և տոկոսը
41. անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը
42. սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համարհաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը և դրանց թիվը
43. ուսումնական հաստատության կողմից իրականացված՝ներառական կրթության առնչվող արտադասարանական միջոցառումների (զրույցներ, կինոնկարներիդիտումներ, քննարկումներ. կլոր-սեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներև այլն)թիվը՝ ըստ դասարանների

Ներառական կրթության և հավասարության ապահովումը նկարագրող հիմնական ցուցանիշներինև չափանիշներին հաստատության համապատասխանությունը գնահատելու ձևերը ներառում են և՛ փաստաթղթային ուսումնասիրություն, և՛ դիտարկում-փաստագրում, և՛ հարցումների իրականացում:

Մաս 4-ում բերված չափանիշներ 1-ից 14-ի,17-ից 23-ի, 29-ի և 42-ի համար անհրաժեշտ է կատարել փաստաթղթային ուսումնասիրություն, դիտարկում-փաստագրում կամ հարցումներ և լրացնել ստորև բերված Աղյուսակ 28-ը:

Աղյուսակ 28. Հաստատությունում ներառական կրթության իրականացմանը վերաբերվող չափանիշներ

Չափանիշ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
1.Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է ուսումնական հաստատության զարգացման ծրագրում	Այո		(Եթե այո, ապա կատարել հղում համապատասխան փաստաթղթից:) Տնօրենի՝ դպրոցի զարգացման ծրագիր 2018-2023 :
2.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստումներ	Այո		(Եթե այո, ապա կատարել հղում և թվարկել ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումները:)ԿԱՊԿ ունեցող երեխաների համար հատուկ հարմարեցված սանհանգույցի կառուցում: Տեսողության խնդիր ունեցող երեխաների համար բազրիքների և աստիճանների եզրերին դեղին գույնով ընդգծում:

3.Ուսումնական հաստատությանտնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով օժտված տեղակալ (կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին).	Այո		(Եթե այո, ապա նշել համապատասխան աշխատակցի տվյալները և նկարագրել պարտականությունների շրջանակը:) Տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալ: Համակարգում և վերահսկում է ԱՈՒՊ-ների վարման գործընթացը:

4.Ուսումնական հաստատության վեր կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ		Ոչ	(Եթե այո, ապա նկարագրել կայքի ներառական կրթության բաժինը, ինչպիսի նյութեր են տեղադրված կայքում, դրանց թարմեցման հաճախականությունը, հաճախորդների թիվը և այլն):
5.Ուսումնական հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:	Այո		(Եթե այո, ապա նշել այդ ծրագրերըդասընթացները, ներառված սովորողների թիվը ըստ դասարանների, դրանց հատկացված շաբաթական ժամերը ըստ դասարանների, և գնահատել դրանց արդյունավետությունը:) Ուսուցչի օգնականները դասղեկների հետ միասին պարբերաբար կատարել են սեմինարներ 3-12 –րդ դասարաններում: Թեմա՝ «Բուլինգը և դրա կանխարգելումը»:
6.Վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցելէ ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստման[i]	Այո		(Եթե այո, ապա նշել վերապատրաստող կազմակերպությունը, վերապատրաստմանամսաթիվը, և տևողությունը ժամերով, ինչպես նաև մեկնաբանել դրա արդյունավետությունը:)2020թ. «Zoom»-ով մասնակցել են ԱՈՒՊ-ի վերապատրաստումներին: 2021թ. հունվարի 21-ին ԱՈՒՊ-ի վերապատրաստում: 2021 թ. փետրվարի 11-ին՝ «Սերը ընտանիքում և ընտանիքից դուրս»: 2021թ. նոյեմբերի 3-ին՝ « Տեսողության խանգարում ունեցող սովորողների ընդհանուր բնութագիրը, աջակցման մեխանիզմներ»:
7.Ուսումնական հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ: Վերջին 5 տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը:	Այո 30 ուս ուց իչ		(Եթե այո, ապա նշել վերապատրաստված ուսուցիչների թիվը, և որպես ուսուցիչ վերապատրաստող վերապատրաստված ուսուցիչների թիվը: Նշել նաևվերապատրաստող կազմակերպությունը, վերապատրաստման ամսաթիվը, և տևողությունը ժամերով, ինչպես նաև մեկնաբանել վերապատրաստումների արդյունավետությունը:) ՀՄԿ- մարտի 15,16,17- «Ուսուցչի օգնականի դերն ու գործունեությունը»: ՏՄԱԿ- «Բուլինգը դպրոցում» «ԱՈՒՊ-ների վարման գործընթացը》 /2021.01.21/ «Տեսողական խնդիրներով ԿԱՊԿ ունեցող սովորողներին անհրաժեշտ հարմարեցումներ» -/2023.02.15/
8.Ուսումնական հաստատությունում ամենուրեք(դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն		Ոչ	(Եթե այո, ապա նկարագրել ինչպիսի պայմաններ են ստեղծված տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիության ապահովման համար:)

9.Հաստատությունն ունի ԿԱՊԿ ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, ուսուցչի օգնական և այլն)	Այո		(Եթե այո, ապա թվարկել հոգեբանամանկավարժական աջակցության ինչ հաստիքեր ունի հաստատությունը, ինչպես է կազմակերպվում նրանց աշխատանքը: Նկարագրել նաև ներառական կրթության ուղղությամբ համապատասխան աշխատողների պարտականությունների շրջանակը, կրթության առանձնահատուկ պայմաններ կարիք ունեցող երեխաների հետ վարվող աշխանքները, լրացուցիչ հաստիքների կարիքը, և այլն:) ներառական կրթության ուղղությամբ դպրոցում աշխատում են ուսուցչի օգնականները և հոգեբանը:Հոգեբանը աշխատում է ՏՄԱԿ-ի կողմից ուղարկված աշխատանքային գրաֆիկով: ՈՒսուցչի օգնականները կատարում են անհատական պարապմունքներ և աջակցում են դասապրոցեսի ընթացքում:
10.ԿԱՊԿ ունեցող սովորողներն ապահովված են դասագրքերով, գրենական պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով,	Այո		(Եթե այո, ապա թվարկել նշել ինչ դասագրքեր են օգտագործում ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողները, դրանց քանակը, ձեռք բերման տարեթիվը, ֆիզիկական վիճակը և այլն:)
11.Հաստատությունում առկա են ուսումնամեթոդական նութեր և սարքավորումներ՝ լսողության և տեսողության գործառույթի բացակայություն կամ սահմանափակում ունեցող աշակերտների համար	Ոչ		(Եթե այո, ապա թվարկել ինչ սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր ունի հաստատությունը լսողության և տեսողության ֆունկցիայի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար, դրանց քանակը, ձեռք բերման տարեթիվը, ֆիզիկական վիճակը, օգտագործման հաճախականությունը, արդյունավետությունը և այլն: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և

			ուսումնամեթոդական նյութերի կարիքը:)
12.Ուսումնական հաստատության դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ ԿԱՊԿ ունեցող սովորողները մեկուսացված չեն	Այո		(Եթե այո, ապա նկարագրել ԿԱՊԿ ունեցող երեխաների համար ուսուցման կազմակերպման պայմանները,դասասենյակների դասավորվածությունը,ինչպես նաև նրանց դասերին մասնակցության պայմաններն ու ձևերը:)
13.Ուսումնական հաստատությունն ունիռեսուրս-սենյակ՝ԿԱՊԿունեցող սովորողներիհամար	Այո		(Եթե այո, ապա նկարագրել ԿԱՊԿ ունեցող երեխաների համար նախատեսված ռեսուրս-սենյակի ֆիզիկական վիճակը, չափերը, հագեցվածությունը սարքավորումներով և ուսումնամեթոդական նյութերով, ինչպես նաև սենյակի օգտագործման հաճախականությունը: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը:)վերանորոգված է, տարածքը՝ 22,3 քմ.: Հագեցված է ուսումնամեթոդական նյութերով/ ավազաթերապիայի համար սեղան, կինետիկ ավազներ,կաղապարներ,դիդակտիկ նյութեր և զարգացնող դիդակտիկ խաղեր/:Ունենք լվացարանի, հեռուստացույցի կարիք:
14.Ուսումնական հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական խոչընդոտները (թեքահարթակ, հենակ և այլն)	Ոչ		(Եթե այո, ապա նկարագրել, թե ինչպես և մանրամասնել ինչ պայմաններ կան հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար. օրինակ՝ թեքահարթակ, հենակներ և այլն: Թվարկել նաև լրացուցիչ կարիքները:)
15Ուսումնականհաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները (վերաբերմունք, կարծրատիպ)	Այո		(Կատարել հարցում պարզելու, թե արդյոք հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները (վերաբերմունք, կարծրատիպ): Հարցման մեջ ներառել ուսուցիչներին, սովորողներին, ԿԱՊԿ ունեցող սովորողների, ծնողներին, և վարչական կազմը: Նկարագրել, հարցման արդյունքները:)Հաղթահարված է, հարցվածների 89,4 տոկոսն ունեն դրական վերաբերմունք ներառական կրթության հանդեպ:
16.Անհատական ուսումնական պլանները մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները, առաջընթացը	Այո		.....

17.Ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրականդիրքորոշում ներառական կրթության նկատմամբ	30		(Ուսուցիչների դիրքորոշումը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ ուսուցիչների, սովորողների, այդ թվում ՝ ԿԱՊԿ ուեցողների, ծնողների, և վարչական կազմի շրջանում: Ուսուցիչների շրջանում հետազոտության արդյուքներով հաշվարկել նրանց թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ:)26 ուսուցիչ ունի դրական վերաբերմունք:
18.Ուսուցիչները գիտակցում են ներառականկրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր	Այո		(Ուսուցիչների դիրքորոշումը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ ուսուցիչների, սովորողների, այդ թվում ՝ ԿԱՊԿ ուեցողների, ծնողների, և վարչական կազմի շրջանում)
19.Ուսուցիչները ունեն հավասար վերաբերմունք բոլոր երեխաների նկատմամբ, անկախ նրանց	Այո		(Ուսուցիչների վերաբերմունքը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել

միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից			հարցումներ ուսուցիչների, սովորողների, այդ թվում՝ ԿԱՊԿ ուեցողների, ծնողների, և վարչական կազմի շրջանում) Հարցման արդյունքում պարզվել է, որ բոլոր ուսուցիչներն ունեն դրական վերաբերմունք:
20.Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում և նույնիսկ սեփականվարքագծում	Այո		(Կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ հայտաբերելուուսուցիչների ունակությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներուսուցիչների, սովորողների, այդ թվում՝ ԿԱՊԿ ուեցողների, ծնողների, ինչպես նաև վարչական կազմի շրջանում)
21.Ուսումնական հաստատությունն իրականացնում է սոցիալական աջակցության ծրագրեր սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար	Այո		(Եթե այո, ապա նկարագրել, թե ինչպիսի սոցիալական աջակցության ծրագրեր է իրականացնում հաստատությունը սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար,այդ ծրագրերին մասնակից սովորողների թիվը և այլն:)
22.ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված սովորողների նախաձեռնությունները	Այո		(նկարագրել հաստատության սովորողների այն որոնք ուղղված են ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանը): Ուշադիր և հոգատար վերաբերմունքի ցուցաբերում:

Ամփոփել ներառական կրթության իրականացման ուղղությամբ հաստատության հիմնական ցուցանիշները և կատարել եզրահանգումներ:_____Հաստատության զարգացման ծրագրում ընդգրկված է ներառական կրթություն իրականացնելը:

_____

_____

_____(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Մաս 4-ում բերված ցուցանիշներ 15, 16 և 24-ից 42-ի համար անհրաժեշտ է կատարել փաստաթղթային ուսումնասիրություն և փաստագրում, այնուհետ լրացնել ստորև Աղյուսակ 29-ը:

Աղյուսակ 29. Տվյալներ հաստատությունում ներառական կրթության իրականացման և հավասարության ապահովման խնդիրների վերաբերյալ

Ցուցանիշ	2020-2021	2021-2022	2022-2023
Հաստատության ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը և տոկոսը(ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների տոկոսըհաշվարկել ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվի նկատմամբ)	3 100	3 100	2
Հաստատության ռեսուրս-սենյակայցելողԿԱՊԿունեցող սովորողներիծնողների(խնամակալների)թիվը	3	3	2

Հաստատության այն սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ունեն ԿԱՊԿ (ԿԱՊԿ ունեցողսովորողների թիվը և տոկոսը հաշվարկել ըստ հաշմանդամության և կարիքների տիպերի՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի նկատմամբ).	3 0,72	3 0,72	2
Հաստատությունից հեռացած (ուսումն անավարտ թողած) ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը և տոկոսը(ուսումն անավարտ թողած ԿԱՊԿ ունեցող սովորողների	0	1	1

տոկոսըհաշվարկել ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվի նկատմամբ)			
ԿԱՊԿ ունեցող սովորողների բացակայությունների տարեկան միջին թիվը՝ ժամ/սովորող	0	0	0
Արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը	0	0	0
Ուսումնականան հաստատության աշակերտական խորհրդում ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը	0	0	0
ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված սովորողների նախաձեռնությունների թիվը տվյալ ուստարում	13	5	6
Հաստատության վեբ կայքում և (կամ)աշակերտական թերթում ԿԱՊԿ ունեցող սովորողների կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութերի, հոդվածների, լուսանկարների, և այլ հրապարակումների թիվը	0	0	0
Սեռերի հավասարության գործակիցը (հաշվարկ. հաստատությունում սովորող աղջիկների ընդհանուր թվի հարաբերությունը տղաների ընդհանուր թվին)	1,3	1,5	1,3
Աշակերտական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը (հաշվարկ.աշակերտական խորհրդում ընդգրկված աղջիկների թվի հարաբերությունը տղաների թվին)	2,5	0.8	1.31
Գերազանց տարեկան առաջադիմություն ունեցող տղաների թվի հարաբերությունը գերազանց տարեկան առաջադիմություն ունեցող աղջիկների թվին	97	0,5	1,29
Տարեկան անբավարար գնահատական (գնահատականներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարար գնահատական (գնահատականներ) ունեցող աղջիկների թվին	2,5	2,1	0
Տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունը աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով)	84,37	81,25	80,2
«Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա»և«Կենսաբանություն»առարկաներից տղաների և աղջիկների տարեկան միջին առաջադիմությունը	0	0	0
Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թվի տոկոսը (ազգայինփոքրամասնությունների տոկոսը հաշվարկել հաստատությանսովորողների ընդհանուր թվի նկատմամբ)	11 2,63	10 2,39	10 2,49
Աշակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը	1	1	1
Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների միջին տարեկան առաջադիմությունը	100	100	100
Անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և տոկոսը (անվճար դասագրքեր ստացող սովորողների տոկոսը հաշվարկել հաստատությանսովորողների ընդհանուր թվի նկատմամբ)	28 6,7	28 6,7	25 6,23
Անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը (անվճար սնունդստացող սովորողների տոկոսը հաշվարկել հաստատությանսովորողների ընդհանուր թվի նկատմամբ)	170 40,66	170 41,5	177 44,13
Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերի թիվը տվյալ ուստարում	0	0	1
Հաստատության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի թիվը	0	0	0
Հաստատության կողմից իրականացված՝ ներառական կրթությանն առնչվող արտադասարանական միջոցառումների (զրույցներ, կինոնկարներիդիտում, քննարկումներ, կլորսեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներևայլն) թիվը՝ըստդասարանների	1	2	2

Ամփոփել ներառական կրթության իրականացման և հավասարության ապահովմանուղղությամբ հաստատության հիմնական <u>ցուցանիշները</u>, վերլուծել դրանք և կատարել եզրահանգումներ:

Հաստատությունը իրականացնում է ներառական կրթություն: անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Մաս 5. Համայնքային մասնակցություն

«Ծնողները, ընտանիքները, մանկավարժները և համայնքները միասնաբար – այս այն լավագույն համագործակցությունն է, որը կարող է ապահովել բոլոր աշակերտների համար անհրաժեշտ աջակցության տրամադրումը՝ ուսման և կյանքի մեջ հաջողությունների հասնելու նպատակով:

Միջազգայնորեն տարանջատում են ծնողների, ընտանիքների, և համայնքների մասնակցության 6 ձև: Դրանք են՝

- ծնողական և ընտանեկան խնամքը, ուշադրությունը և հոգածությունը երեխայի հանդեպ
- ծնողների, ընտանիքի և համայնքի մշտական հաղորդակցությունը ուսումնական հաստատության հետ
- ծնողների, ընտանիքի և համայնքի կամավորական բնույթի գործունեությունը՝ ուղղված ուսումնական հաստատությանն օժանդակելուն
- աջակցությունը երեխային իր տնային աշխատանքների կատարման մեջ և սովորելու գործընթացում
- ծնողների, ընտանիքի և համայնքի ներգրավվածությունը ուսումնական հաստատության կողմից որոշումների կայացման գործընթացում
- Ուսումանկան հաստատության համագործակցությունը տեղական իշխանությունների և համայնքների հետ:»[6]

Այսպիսով ծնողների, ընտանիքի և համայնքի մասնակցությունը համարվում է ուսումնական հաստատությանգործունեության բարելավման կարևոր գործոն: Մասնակցության առաջնային և կարևորագույն ձևն է՝ծնողների և ընտանիքի կողմից երեխայի հանդեպ ուշադրությունը, հոգածությունըև խնամքը, ներառյալ՝ուսումնական հաստատություն երեխայի կանոնավոր հաճախումնապահովելը: Կարևոր է նաև ծնողների մշտական կապըուսումնական հաստատության հետ,ծնողական ժողովներին կանոնավոր մասնակցությունը՝ երեխայի բացակայությունների, առաջադիմության, հաջողությունների և խնդիրների վերաբերյալ տեղեկացված լինելու և նրան աջակցելու համար:

Ծնողական և ընտանեկան մասնակցության տեսանկյունից շատ կարևոր է նաև երեխայի տնային հանձնարարությունների կատարումը վերահսկելը և անհրաժեշտության դեպքում նրան աջակցելը՝ նպաստելով երեխայի մոտ սովորելու նկատմամբ սիրո և հակումների առաջացմանը: Ծնողներն իրավունք ունեն հետևել երեխայի ուսումնառությանը ուսումնական հաստատությունում, մասնակցել դասալսումներին, սակայն մեր երկրում նրանց մասնակցության այս ձևը տարածված չէ և ծնողների մասնակցության աստիճանը երեխայի ուսումնառության գործընթացինհաստատությունում հիմնականում ցածր է:

Մասնակցության ամենատարածված ձևը Հայաստանում ծնողների, ընտանիքի, և համայնքի կամավորական բնույթի գործունեությունն է՝ հաստատությանն օժանդակելու և երեխաների համար միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Ընտանիքները, ծնողները և համայքները հաստատությանն աջակցում են նաև կամավոր դրամական ներդրումներով, աշխատանքով, գույքով կամ նյութերով, ինչպես նաև միջոցառումների կազմակերպմամբ և դրանց մասնակցությամբ:

Մասնակցության առավել մեծ աստիճանի հասնելու համար կարևոր նշանակություն ունի ծնողների, ընտանիքների և համայնքների ներգրավվածությունը ուսումնական հաստատության

[6](NEA Education Policy and Practice Department, Center for Great Public Schools, 1201 16th St., NW, Washington, D.C. 20036)

կողմից որոշումների կայացմանը, ինչը Հայաստանում ապահովվում է հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի, ինստիտուտի միջոցով: Խորհրդի կազմում ներառվում են հաստատության սովորողների ծնողները, մանկավարժները, տարածքային կառավարման մարմնի, նախարարության և տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչները: Ուսումնական հաստատության կառավարմանը մասնակցում են ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Մասնակցության բարձրացման կարևոր գործոններից է հաստատության կողմից իրականացված քայլերը, որոնք ուղղված ենհաստատության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,ինչպես նաև տարբեր համայնքային կառույցների հետ համագործակցության ամրապնդմանը: Ոչ միայն համայնքը պետք է ակտիվորեն մասնակցի հաստատության գործունեությանը, այլ նաև պետք է գործի հետադարձ կապը: Հաստատությունը գործուն մասնակցություն պետք է ունենա համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ այդ գործընթացում ներգրավելով նաև սովորողներին:Այն պետք է հանդիսանա տվյալ համայնքի կրթամշակութային կենտրոնը, լինի համայնքահեն: Հաստատության գործունեության ներքին գնահատման գործընթացը պետք է բացահայտի, թե որքանով է արդյունավետ սովորող-ծնող-հաստատություն-համայնքհամագործակցությունը, որքանով է այն նպաստում կրթության որակի բարձրացմանը:

Ծնողների, ընտանիքին համայնքի մասնակցությունընկարագրող ցուցանիշներինու չափանիշներին հաստատության համապատասխանությունը գնահատելու ձևերը ներառում են ինչպես փաստաթղթային ուսումնասիրություն, փաստագրում և դիտարկում, այնպես էլ հարցում:

Ստորև բերվում են սովորողների և նրանց ծնողների մասնակցության վերաբերյալ ցուցանիշները:

Ուսումնական հաստատությունում սովորողների և տնօրինության համագործակցությունը, սովորողների մասնակցությունը հաստատության գործունեությանը.

1. տնօրինությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը
2. սովորողների մասնակցությունն իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի վերաբերյալ տնօրինության կողմիցորոշումների ընդունմանը, նման դեպքերի թիվը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը
3. սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և դրանց թիվը, նախաձեռնություններին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը
4. սովորողների կողմից կազմակերպած միջոցառումները և դրանց թիվը, միջոցառումներինմասնակցություն ունեցած սովորողների տոկոսը
5. սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը,մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը
6. իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները,սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները, դրանց թիվը, և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը
7. սովորող-սովորող և սովորող-ուսուցիչ հարաբերությունները ուսումնական հաստատությունում:

Ուսումնական հաստատությունում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները: Ուսումնական հաստատության աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք

8. աշակերտականխորհրդի նախաձեռնած քայլերն՝ ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն
9. աշակերտական խորհրդի ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով
10. աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած միջոցառումները՝ներառյալշաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը

11. աշակերտական խորհրդի գործունեության համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին

Ուսումնական հաստատության ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է տնօրինության և աշակերտական խորհրդի հետ,նպաստում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին

12. սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները, դրանց թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ
13. ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները(հանդեսներ, հավաքներ, երեկույթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն) դրանց թիվը, մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը
14. ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները, դրանց թիվը.
15. ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը և դրանց ընթացքում քննարկված հարցերի շրջանակները
16. ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողներին տրամադարվող աջակցությունը, ձևերը և աջակցություն ստացող սովորողների տոկոսը
17. ծնողական և աշակերտական խորհրդների համագործակցությունը և դրա ձևերը.
18. ուսումնականհաստատության առօրյաից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը
19. ծնողների ներգրավվածությունը սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում, ներգրավվածության ձևերը :Նման աշխատանքներում ընդգրկված ծնողների տոկոսը 17 % Է:Ծնողները աջակցում են միջոցառումների կազմակերպմանը,բացահայտում են աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ կոնֆլիկտները և աջակցում դրանց լուծման հարցում: Աջակցում են շնորհալի երեխաների բացահայտման գործընթացին:

20. Ծնողների 80%-ը օգտվում են http://ktak.am,http://www.armedu.am, http://forum.armedu.am/, http://lib.armedu.am, և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության կայքից:

Ուսումնական հաստատությունն ու համայնքը համագործակցում են, և հաստատությունը վարում է ակտիվ հասարակական կյանք.

21. ուսումնական հաստատությանշենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակացությունը, այդ գործումկատարված ներդրումները
22. համայքնային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը: Հիմնականում մասնակցել են շաբաթօրյակներին, կանաչապատման աշխատանքներին և ծառատունկին, մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը - 70%:
23. ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված և անցկացված միջոցառումները և դրանց թիվը (2) մասնակից սովորողների տոկոսը (90%) և համայնքի ներկայացուցիչների թիվը (80): «Անկախության տոն», «Սբ.Հարության տոն»:
24. ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակից սովորողների թիվը՝ ըստ ծրագրերի:

Մաս 5-ում բերված ցուցանիշներ 1-ից 7 ցուցանիշների համար անհրաժեշտ է կատարել տվյալների ու տեղեկատվության հավաքագրում, փաստաթղթային ուսումնասիրություն կամ դիտարկում-փաստագրում, այնուհետ լրացնել ստորև Աղյուսակ30-ը:

Աղյուսակ30. Տվյալներ հաստատության գործունեությանը սովորողների մասնակցության վերաբերյալ

Ցուցանիշ	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Դեպքերի թիվը, երբ սովորողները մասնակցությունն են ուեցել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից որոշումների կայացմանը	3	2	1
Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների թիվը	5	3	3
Սովորողների կողմից կազմակերպած միջոցառումների թիվը	7	5	5
Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը	2	1	2

Նկարագրել, թե ինչպես է տնօրինությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը

Աշակերտական խորհուրդը, հանդիսանալով սովորողների ինքնավարության բարձրագույն մարմին ,տնօրինության առջև բարձրացնում է աշակերտներին հուզող բոլոր խնդիրները:Տնօրինությունը աչալրջորեն ուսումնասիրում է աշակերտներին հուզող հարցերը :Ընթացիկ ուստարիներում աշակերտների բոլոր նախաձեռնությունները իրականցվել են տնօրինության կողմից:Աշակերտների նախաձեռնությամբ և տնօրինության հովանավորությամբ ամեն տարի այցելություն է կատարվում Եռաբլուր Պանթեոն, Կարմիր բլուր, թանգարաններ ,որտեղ մեր աշակերտները հանդես են գալիս տարաբնույթ միջոցառումներով:

Սովորողների մասնակցությունը իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից ընդունած որոշումներին և դրանց կայացմանը մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը -22%

Նկարագրել վերջին 3 տարում քննարկված խնդրահարույց հարցերը և ընդունված որոշումները	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն
1.Ուսումնառության որակի բարձրացմանն ուղղված հարցեր : Հաճախակի բացակայող և դասերից ուշացող աշակերտների հարցը	Ուստարվա ընթացքում	2,9%	Քննարկվել են ուսումնառության որակի բարձրացման հարցեր
2.Աշակերտների կողմից ներքին կարգապահական կանոնների պահպանումը	02.11.2022	100%	Քննարկվել են ներքին կարգապահական կանոնների պահպանման, դրանց խախտող աշակերտների նկատմամբ ուժ կիրառելու հարցեր
....			

Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և նախաձեռնություններին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը

Նկարագրել վերջին 3 տարում սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն
1. Պատի թերթի մրցույթ «Հայոց անկախ երկիր, իմ Հայաստան-31 տողան-միջոցառում	20.09.2022	100 %	Անցկացնել ռազմահայրենասիրական ոգով միջոցառում

2.«Զինվորով է բանակը հաղթանակած»- պատի թերթի մրցույթ	28.01.2022թ	100 %	Հայրենասիրության վեհ գաղափարի ձևավորում հայ հասարակության շրջանում
3. «Քրիստոսն է մեր զատիկը»	09.04.2023	100 %	Հոգևոր դաստիարակության կարևորությունը որպես արժեք:
4.Ծխախոտի արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցված վնասի նվազեցման և կանխարգելման մասին: Վնասվածքների կանխարգելումը դպրոցում: Բուլիինգի դեպքերը դպրոցում:	05.04.2023	25 %	Կանխարգելել վատ սովորությունները
4.«Գրքի անմարելի ջահը» Պատի թերթի մրցույթ	18.02.2023	80%	Սեր գրքի և գրականության նկատմամբ
5.Կազմակերպել մարտի 1-ի տարհանման գործողություններ կապված ՔՊ-ի հետ	01.03.2023	100%	Գործնականում կիրառել տարհանման կանոնները ստեղծված արտակարգ իրավիճակում
6.Ծառատունկ, խնամք այգու և փոքրիկ բանջարանոցի ստեղծում, թռչնաբների պատրաստում և տեղադրում,հուշարձանների մաքրման աշխատանքներ՝ շաբաթօրյակի տեսքով:	29-31 .04.2023	26,55 %	Ռազմահայրենասիրական ոգու ձևավորում և բարձրացում
.....			
Սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները և միջոցառումներին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.			
Նկարագրել վերջին 3 տարում սովորողների կողմից կազմակերպվածմիջոցառումները	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Համադպրոցական կամ դասարանային
1. «Շնորհավոր տոնդ, անկախ Հայաստան-31» տողան-միջոցառում	19.09.2022	100%	Համադպրոցական
1.Ես ուզում եմ ապրել խաղաղ մոլորակում» կավճանկարչության մրցույթ	28.09.2022	51%	Կրտսեր դպրոց
2.«Իմ լուսավոր ուսուցիչ» միջոցառում	05.10.2022	100%	համադպրոցական
3.«Հայաստանը մեր տունն է» նկարների ցուցահանդես-մրցույթ	08.10.2022	20%	աշխորհուրդ
4. ա)Հովհաննես Բաղրամյան-հայից հայ- 125 ամյակին նվիրված միջոցառում զորավարի կիսանդրու մոտ (գյուղի զբոսայգում)	02.12.2022	68 %	համադպրոցական աշխորհուրդ

5.«Տարհանման գործողություններ» միջոցառում նվիրված երկրաշարժին	07.12.2022	100%	համադպրոցական
6.«Հայոց բանակ 31, մերօրյա հերոսներ» շնորհավորական նամակներ, բացիկներ ուղարկել ՀՀ ԶՈՒ-ում ծառայող նախկին շրջանավարտներին:	25.01.2023	100%	համադպրոցական աշխորհուրդ
7.« Ես քո զինվորն եմ, հայրենիք» միջոցառում նվիրված հայոց բանակի 31 ամյակին	29.01.2023	100%	աշխորհուրդ համադպրոցական
8.Գրքի նվիրման օր միջոցառում- «Գիրքը կյանքի լապտերիկ»	18.02.2023	100%	աշխորհուրդ համադպրոցական
9.«Լեզվի մահը արագացնում է ազգի հոգևոր մահը» միջոցառում	23.02.2023	100%	աշխորհուրդ համադպրոցական
10. «Գարունը սեր է, սերը՝ մայրություն» միջոցառում	13.03.2023	100%	համադպրոցական աշխորհուրդ
11. «Սուրբ Զատիկ» միջոցառում, վահանակի պատրաստում	14.04.2023	100%	վահանակի պատրաստում
11. Օդային տագնապ: Ուսումնավարժություն	19.04.2023	100%	համադպրոցական
11.Շաբաթօրյակ և ծառատունկ	29.04.2023	100%	աշխորհուրդ ծնողխորհուրդ
Սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը սովորողների մասնակցության դեպքերը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն
Ծանոթացում և մասնակցություն հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը	02.11.2022	100%	Մշակման արդյունքում հաստատությունում աշակերտները կունենան ներքին կարգապահական կանոնները, որոնցով առաջնորդվելով դպրոցում կապահովվի կարգապահուրժություն և

			ուսման բարձր մակարդակ,հետաքրքիր առօրյա, լի տարաբնույթ միջոցառումներով, ազատ ժամանցներով
Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը			
Թվարկել վերջին 3 տարում սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները, նշել դրանց թեմաները	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն
1.համաժողով՝ դպրոց-ընտանիք-աշակերտ կապը	07.09.2022	40%	Ակտիվ համագործակցություն ծավալել,ապահովելով դպրոց-ընտանիք-աշակերտ կապերը
2.սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովելու խնդիրը և գրենական պիտույքներով ապահովելու հարցը	04.10.2022	6,2 % 25 աշակերտ	Ձեռնարկվեցին միջոցառումներ ծնողական խորհրդի հետ միասին սոցիալապես անապահով երեխաներին անվճար դասագրքերով, գրենական պիտույքներով ապահովելու համար
3.դասաժամերին ՏՀՏ միջոցների կիրառումը	10.03.2022	25%	Հաշվի առնելով աշակերտների հետ կազմակերված սեմինար առաջարկները հաստատությունում ձևավորվեց համակարգչային կաբինետ,նպատակը դասաժամերին ՏՀՏ միջոցների կիրառումը
4. «Հոգու խոսքը թևեր ունի» միջոցառում	16.11.2022	40%	Հանդիպում ժամանակակից գրողների հետ
4. Դպրոցում E-Cult աբոնեմենտային ծրագրի շարունակաբար իրականացման հարցը:	Ուստարվա ընթացքում	100%	Դպրոցականներին հաղորդակից դարձնել մշակութային աշխարհին և խթանել դպրոցի և մշակութային հաստատությունների կապը:
5. Ծխախոտի վնասակար ազդեցությունը, բուլիինգի դեպքերը, դրանց կանխարգելումը դպրոցում	04.05.2023	100%	Երեխաների իրավունքների պաշտպանությունը դպրոցում
Նկարագրել սովորող - սովորող և սովորող - ուսուցիչ հարաբերություններն ուսումնական հաստատությունում			
Հաստատությունում սովորող-սովորող և սովորող –ուսուցիչ հարաբերությունները գտնվում են օրենսդրական և			

կանոնադրական հարթությունում:

Ամփոփել սովորողների մասնակցության վերաբերյալ հաստատության հիմնական ցուցանիշները, վերլուծել դրանք և կատարել եզրահանգումներ ու դրանց բարելավման վերաբերյալ: Հաստատությունում սովորողներին վերաբերվող հարցերը, համադպրոցական միջոցառումները կազամակերպվել են՝ հաշվի առնելով սովորողների կրթական կարիքը, առաջարկությունները և նախաձեռնությունները:Ուսհաստատությունում սովորող–սովորող,սովորող-ուսուցիչ հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա, նաև փոխըմբռնման մթնոլորտում: (անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Մաս 5-ում բերված չափանիշներ 8-ից 11-ի համար անհրաժեշտ է կատարել տվյալների և տեղեկատվության հավաքագրում, փաստաթղթային ուսումնասիրություն կամ դիտարկում-փաստագրում, այնուհետ լրացնել ստորև Աղյուսակ 31-ը:

Աղյուսակ31. Տվյալներ հաստատության աշակերտական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ			
Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.			
Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.	Ամսաթիվ	Աջակցություն ստացած սովորողների թիվը և տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն
1.օգնություն ուսման մեջ հետ մնացող աշակերտներին	Տարվա ընթացքում	12%-48աշ.	Լրացուցիչ արտաժամյա պարապմունքներ: Զրույցներ տարբեր թեմաներով: Սոցիալական խնդիր-ներին ծանոթացնել և նոր միայն աջակցել դրանց լուծման հարցում:
2.աշակերտական վարքի և կարգապահության վերաբերյալ	Տարվա ընթացքում	31% - 120աշ.	Նկատվել է կարգապահության բարձրացում, զրույց է անցկացվել դպրոցի հերթապահության կարևորության մասին:
....			
Աշակերտական խորհրդի ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով			
Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից ձեռնարկած միջոցները՝սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով	Ամսաթիվ	Աջակցություն ստացած սովորողների թիվը և տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն
1.«Ինչպես պետք է իրենց դրսևորեն աշակերտները հաստատությունում » զրույց	Տարվա ընթացքում	23,3 %-97 աշակերտ	Տվել է լավ արդյունք
2. «Ինչպես պետք է իրենց դրսևորեն աշակերտները դասապրոցեսին » զրույց	Տարվա ընթացքում	12 %-50 աշակերտ	Տվել է դրական արդյունք

6. Դասղեկի ժամերի անցկացում «Հանդուրժողականություն» թեմայով	Տարվա ընթացքում	15%-80 աշակերտ	Աշխորհուրդը դասղեկների հետ տանում է համագործակցված աշխատանք
Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած միջոցառումները.՝ ներառյալ շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը			
Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած վերոնշյալ միջոցառումները	Ամսաթիվ	Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ	Մեկնաբանություն
1.Շաբաթօրյակ: Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության միջազգային օրը Հայաստանում:	15.04.2023	75%	Մասնակցել են համայնքի տարածքի մաքրման աշխատանքներին
2. Համապետական շաբաթօրյակ : «Մաքուր պահենք մեր երկիրը,մեր համայնքը, մեր դպրոցը»	29.04.2023	100%	Մասնակցել են դպրոցի տարածքում մաքրման աշխատանքներին, դասասենյակնե-րում և համայնքի տարածքում
....			
Նկարագրել աշակերտական խորհրդի գործունեության սկզբունքները և ձևերը՝ համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին			
Աշակերտական խորհրդի գործունեությունը բացառապես իրականացվում է սովորողների ինքնավարության և ինքնակառավարման ,ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքների համապատսխան:			

Ամփոփել հաստատության աշակերտական խորհրդի գործունեության ցուցանիշները և չափանիշները, վերլուծել դրանք և կատարել եզրահանգումներ դրանց բարելավման վերաբերյալ:
Աշակերտական խորհուրդը գործում է աշակերտական խորհրդի կանոնադրության համապատասխան:

_____(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Մաս 5-ում բերված 12-ից 20 ցուցանիշների համար անհրաժեշտ է կատարել տվյալների և տեղեկատվության հավաքագրում, փաստաթղթային ուսումնասիրություն կամ դիտարկում/փաստագրում, այնուհետ լրացնել ստորև Աղյուսակ 32-ը:

Աղյուսակ 32 Տվյալներ հաստատության ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	2019-2020 ուս-տարի	2020-2021 ուս-տարի	2021-2022 ուս-տարի	2022-2023 ուս-տարի

Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.	3 100%	2 100%	4 100%	100%
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը	70	60	68	69
Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը	-	-	-	-
Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուստարվա ընթացքում	4	7	5	10
Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում	8,8%	15%	0,08%	25 6,23%
Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը.	27%	-	-	14,21%
Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են, https://matyan.emis.am/#/, http://ktak.am, http://www.armedu.am, http://forum.armedu.am/, http://lib.armedu.am, և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության	85%	80%	89%	90%

Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները

Նկարագրել վերջին 3 տարում սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները	Ամսաթիվ	Առաջարկների քննարկմանը մասնակից ծնողների թիվը		Մեկնաբանություն
1.Արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների ժամանակ սովորողների առողջության և անվտանգության պահպանումը	Ուստարվա ընթացքում	20		Կարևորեցին արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին աշակերտների մասնակցությունը և անվտանգության ապահովումը
2. Բռնության և վատ սովորությունների հետևանքները «Բուլիինգի վտանգավորությունը դպրոցում, շրջապատում և դրա կանխարգելումը» թեմայով սեմինար և դիտումներ :	ուտարվա ընթացքում			Կազմակերպել միջոցառումներ, անցկացնել սեմինարներ ընդդեմ ֆիզիկական և հոգեբանական ճնշման, բռնության և վատ սովորությունների
3.Սովորողների ուսուցման և դաստիարակության համար հաստատության ուսումնանյութական բազայի հարստացմանն աջակցելը	ուտարվա ընթացքում	20		Կարևորեցին ուսումնանյութական բազայի հարստացումը
4. Աջակցել աշակերտների հետաքրքրությունների և նախասիրությունների բացահայտմանը	ուտարվա ընթացքում	20		Աջակցել խմբակների աշխատանքներին
5.Թեմա « Սովորողնորի առողջությունը, սոցիալական ապահովությունը և կյանքի անվտանգությունը»	ուտարվա ընթացքում	70		Կազմակերպել միջոցառումներ կապված

				սովորողների առողջության,կյանքի անվտանգության և սոցիալական ապահովության ուղղությամբ
6.Հաստատության երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանն ու զարգացմանը օժանդակելուն	ուստարվա ընթացքում	40		Որպեսզի ունենանք երիտասարդ, խելացի, զարգացած, պատշաճ վարքով և վարվելակերպով սերունդ
7. Ազատ ժամանցի կազմակերպման կարևորությունը դպրոցականի կյանքում	ուստարվա ընթացքում	128		Կազմակերպել էքսկուրսիաներ, միջոցառումներ, այցելել թանգարաններ, մշակութային օջախներ:
	Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումները՝ (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն, մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը,			
Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները	Ամսաթիվ	Մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը		Ծնողական ներդրումների չափը
1.Ճանաչողական այցեր,էքսկուրսիաներ Այցելություն «Մատենադարան» , «Բուսաբանության այգի» , «Զվարթնոց տաճար» «Խնկո Ապոր գրադարան», «Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան», «Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան», «Վազգեն Սարգսյանի տուն-թանգարան», «Հովհ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարան», «Պանթեոն»,«Եռաբլուր», «Ծիծեռնակաբերդ» «Ուխտագնացություն Ծաղկեվանք», «Գառնի գեղարդ»	ուսարվա ընթացքում	80 80 %		Ծնողները մասնակցել են տրանսպորտի կազմակերպ- ման հարցում
2.«Մեր հավերժության բանալին մեր լեզուն է» պատի թերթի մրցույթ նվիրված մայրենիի օրվան	21.02.2023	35 90%		Օժանդակել պատի թերթերի պատրաստ- մանը
3.Թեմա՝ «Ո՛չ ալկոհոլին, ո՛չ թմրանյութերին» քննարկում և տեսասահիկի դիտում	11.03.2023	37 100%		
4.Այցելել «Ծիծեռնակաբերդի հուշահամալիր», «Բյուրականի աստղադիտարան», «Վիկտոր Համբարձումյանի» տուն-թանգարան, «Օշական», «Խոր Վիրապ», «Կարբիի ձոր» «Եռաբլուր», Ստեփանավան «Դենդրոպարկ», Գյումրի , «Մուսա լեռան» թանգարան», Էջմիածնի «Մայր տաճար», «Տառքարերի պուրակ», «Բաշ Ապարանի հուշահամալիր», «Սառնաղբյուրի եկեղեցի»	ուստարվա ընթացքում	200 90%		Հագեցած տեղեկատվության ապահովում աշակերտությանը,Հայաստանի տեսարժան վայրերի մասին

	Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները

Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները	Ամսաթիվ	Առաջարկությունների քննարկմանը մասնակից ծնողների թիվը նուսուցիչներին թիվը, ովքեր ծնողական խորհրդի կողմից առաջարկվել են խրախուսման կամ կարգապահական տույժի		Մեկնաբանություններ
...				

	Ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը

Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը	Ամսաթիվ		Մեկնաբանություններ
1. ծնողազուրկ և սոցիալապես անապահով սովորողներին ապահովելու գրենական պիտույքներով և դասագրքերով	04.10.2022		Տրամադրվել է գրենական պիտույքներ և դասագրքեր
2.Հաստատությունում արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների կազմակերպման հարցը	15.10.2022		Ավելի մեծ թվով աշակերտներ են ընդգրկվել արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին
3.«Ազգային տաք սնունդ» ծրագրի իրականացումը դպրոցում	07.09.2022		
4.Դպրոցում ծավալել ձեռնարկատիրական գործունեություն համագործակցելով «Արմաթ» -ի հետ	Ուստարվա ընթացքում		Արդյունավետ աշխատանքի ապահովում
5. Թեմատիկ և կիսամյակային ստուգողական աշխատանքների տետրերի հարցը	Ուստարվա ընթացքում		Ապահովել կայուն գիտելիք
6. Հաստատության բյուջեի պլանավորման նախագծի քննարկում	հոկտեմբեր		Քննարկում, պարզաբանում
7. Ձմռան սեզոնին նախապատրաստման հարցը	Նոյեմբեր-մարտ		Ապահովել դպրոցում ջեռուցումը
8.E-Cult ծրագրի իրականացում	Ուստարվա ընթացքում		Կապը արվեստի օջախների հետ , զարգազնել աշակերտները սերը արվեստի նկատմամբ
8. Ծանոթացում ծնողներին քննակարգին և աջակցել «Վերջին դաս » միջոցառման կազմակերպմանը	մայիս		Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ և համագործակցել
9. Հատատության և ծնողների միջև կապի ամրապնդման հարցը	Ուստարվա ընթացքում		Հաստատության և ծնողների միջև կապը ավելի է ամրապնդվել

	Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողներին տրամադարվող աջակցությունը, դրանց ձևերը

Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով	Ամսաթիվ	Ծնողների կողմից ներդրված գումարի չափը		Մեկնաբանություններ

ընտանիքներից սովորողներին տրամադրվող աջակցության դեպքերը և դրանց ձևը				
1.Գրենական պիտույքներ և դասագիրք	Տարվա ընթացքում			Աշակերտները ապահովվել են գրենական պիտույքներով և դասագրքերով
…..				

	Նկարագրել ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցությունը և դրա ձևերը
	Հաստատությունում ուսումնադաստիարակչական բոլոր հարցերը քննարկվել են ծնողական և աշակերտական խորհուրդներում:
	Նկարագրել ուսումնական հաստատության առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը
	Հաստատությունում կատարվող բոլոր իրադարձություններին ծնողները տեղեկանում են դասղեկների միջոցով:
	Ծնողների ներգրավվածությունը. սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին, ներգրավվածության ձևերը

Նկարագրել արտադպրոցական և արտադասարանական աշխատանքները, որոնց մեջ վերջին 3 տարում ծնողները ներգրավված են եղել	Ծնողների մասնակցության ձևերը և մասնակից ծնողների թիվը	Ծնողների ներդրումների չափը		Մեկնաբանություններ
1.Խմբակներ	11	-		
2.Միջոցառումներ	45			
3.Հանգստի և ժամանցի կազմակերպում	67			

	Թվարկել կայքերը, որոնցից օգտվում են ծնողները, օրինակ՝ https://matyan.emis.am/#/, http://ktak.am, http://www.armedu.am, http://forum.armedu.am/, http://lib.armedu.am, հաստատության կայք և այլն, մեկնաբանել դրանց անհրաժեշտությունը և օգտակարությունը

Կայքը	Ամսաթիվ	Օգտվող ծնողների թիվը		Մեկնաբանություն
1. https://matyan.emis.am/#/	Ամեն օր	100		Ստանում են անհրաժեշտ տեղեկատվություն
2.http://ktak.am	Ամեն օր	90		Ստանում են անհրաժեշտ տեղեկատվություն
3.http://www.armedu.am	Ամեն օր	40		Ստանում են անհրաժեշտ տեղեկատվություն

Ամփոփել հաստատության ծնողական խորհրդի գործունեության ցուցանիշները և չափանիշները և կատարել եզրահանգումներ ու առաջարկություններ դրանց բարելավման վերաբերյալ: Հաստատության ծնողական խորհուրդը սերտորեն համագործակցում է հաստատության մյուս խորհրդակցական մարմինների և տնօրինության հետ :

___(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

Մաս 5-ում բերված 21-ից 24 ցուցանիշների համար անհրաժեշտ է կատարել տվյալների ներեղեկատվության հավաքագրում, փաստաթղթային ուսումնասիրություն կամ դիտարկում-փաստագրում, այնուհետ լրացնել ստորև Աղյուսակ 33-ը:

Աղյուսակ 33. Տվյալներ հաստատության և համայնքի համագործակցության վերաբերյալ

Ցուցանիշ			
Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման աշխատանքներին համայնքի մասնակացությունը, մասնակցության ձևը և այդ գործում կատարված ներդրումները.			
Նկարագրել վերջին 3 տարումհաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրմանև այլ աշխատանքներին համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևերը	Ամսաթիվ	Ներդրման չափը	Մեկնաբանութ-յուն
1. Վերանորոգում 2. Դպրոցի ճաշարանի և լաբորատորիաների վերանորոգում	Ուստարվա ընթացքում	10.89 տոննա	Ապահովել բարենպաստ պայմաններ՝ կրթության և սննդի բարելավման համար
2.Գույք՝ պահարաններ:	Ուստարվա ընթացքում		
3.Տրամադրել ծառեր և կազմակերպել ծառատունկ	Ուստարվա ընթացքում	250 ծառ	Ձևավորել աշակերտների մոտ հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ
Նկարագրել համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածության աստիճանը			
Համայնքի առկա խնդիրներից տեղյակ են հաստատության սովորողները			
Ուսումնական հաստատության մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության համայնքի աշխատանքներին մասնակցության դեպքերը և դրանց ձևերը	Ամսաթիվ	Մասնակիցսովորողների և աշխատողների տոկոսը	Մեկնաբանություն
1.Համայնքում մաքրման և ծառատնկման աշխատանքներ	Տարվա ընթացքում	50%	Համայնքի տարածքում կատարվել են մաքրման և ծառատնկման աշխատանքներ
3. Հուշարձանների մաքրման աշխատանքների կազմակերպում	Տարվա ընթացքում	10%	Հոգածություն և նվիրվածության դրսևորում,գնահատում և կարևորում հուշարձանների մշակույթը
Ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները.			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները, նշել դրանց թիվը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների ու աշխատողների տոկոսը և համայնքի բնակիչների թիվը	Մեկնաբանություն
1.Համայնքի հիմնադրման 75 ամյակ	02.10.2022	50%, 300	Հագեցած

			տեղեկատվություն տալ գյուղի հիմնադրամի 75 տարիների ձեռքբերումների և բարգավաճման մասին
2.«Կյանքս Արցախին» խաչքարի մաքրման աշխատանք	11.12.2022		
....			

Համայնքի բնակիչները օգտվում են հաստատության մարզադահլիճից, ինտերնետից, գրադարանից և այլ հնարավորություններից			
Նկարագրել, թե հաստատության ինչպիսի ծառայություններից են օգտվում համայնքի բնակիչները	Հաճախականությունը՝ ամսեկան կամ տարեկան կտրվածքով	Օգտվող բնակիչների թիվը	Մեկնաբանություն
1. Գրադարան	Ամսեկան կտրվածքով	20	Ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն
....			

Ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների(ՀԿ) հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակից սովորողների թիվը՝ ըստ ծրագրերի			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատությանը և ՀԿ-ների համատեղ իրականացված կրթական բոլոր ծրագրերը	Ծրագրի տևողությունը	ՀԿ –ի անվանումը	Մասնակից սովորողների թիվը
			-
			-

Ամփոփել հաստատության և համայնքի համագործակցության ցուցանիշները, վերլուծել դրանք և կատարել եզրահանգումներ դրանց բարելավման վերաբերյալ: Հաստատությունը սերտ համագործակցում է համայնքի հետ,համայնքն էլ իր հերթին աջակցում է հաստատությանը:
___(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր):

Մաս 5-ի 7-րդ, 11-րդ, 17-րդ, 18-րդ և 22-րդչափանիշներին հաստատության համապատասխանությունը գնահատելու համար և վերը բերված աղյուսակներում դրանց արդյունքները նկարագրելու համար անհրաժեշտ է իրականացնել հարցումներ շահառու խմբերի շրջանում:

Մաս 6. Հաստատության հիմնախնդիրները, դրանց հաղթահարման ուղիները

Այս մասում հաստատությունը պետք է ամփոփի նախորդ (1-ից 5-րդ) մասերում կատարված մանրամասն ինքնավերլուծությունը՝ ընդհանրացնելով իր ուժեղ և թույլ կողմերը(հիմնախնդիրները) ևնշելովհաստատության հնարավորություններն(հեռանկարները)ու հնարավոր վտանգները(ռիսկերը): Այլ կերպ ասած հաստատությունը պետք է կատարիՈՒԹՀՎվերլուծություն՝ուժեղկողմեր, թույլկողմեր, հնարավորություններ և վտանգներ (SWOT Analysis-Strengths, Weaknesses, Opportunities, and Threads):

ՈՒԹՀՎ վերլուծությունը գործիք է, որը հնարավորություն է ընձեռում ղեկավարությանը, ուսուցիչներին և մյուս աշխատակիցներին միասնաբար վերլուծել և հասկանալ հաստատության գործունեության ուժեղու թույլկողմերը, արդյունավետ կամ ոչ արդյունավետ գործառույթները, ինչպես նաև հեռանկարները՝ ռազմավարական զարգացման ծրագրի մշակման նպատակով: Այն նաև անհրաժեշտ գործիք է առկա հիմնախնդիրների ու մարտահրավերների և դրանց լուծման ուղիների համակարգված ձևակերպման համար: Ըստ էության ՈՒԹՀՎ վերլուծությունը

հաստատության կողմից կարող է կիրառվել ցանկացած պլանավորման, այդ թվում՝ ֆինանսական կամ ապագայի համար որոշումների կայացման գործընթացներում:

Սահմանումներ՝

- ուժեղ կողմեր՝ գործոններ, որոնք ունեն կամ կարող են ունենալ ունեն դրական ազդեցություն հաստատության նպատակների իրագործման վրա և նպաստել դրանց իրականացմանը
- թույլ կողմեր՝ գործոններ, որոնք ունեն կամ կարող են ունենալ բացասական ազդեցություն հաստատության նպատակների իրագործման վրա և խոչընդոտել դրանց իրականացումը
- հնարավորություններ՝ այնպիսի արտաքին գործոններ, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ հաստատության նպատակների իրագործման վրա, սակայն նախկինում հաշվի չեն առնվել
- վտանգներ՝ արտաքին գործոններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ հաստատության նպատակների իրագործման վրա կամ դարձնել դրանք անհասանելի:

Ցանկացած պլանավորման գործընթացից կամ վերլուծության անցկացումից առաջ հաստատությունը պետք է հստակ սահմանի իր տեսլականը և նպատակները՝ ի՞նչ նվաճումներ ու ձեռքբերումներ պետք է ունենա հաստատությունը և ի՞նչ հիմնախնդիրներ այն պետք է լուծի: Հաստատությունը պետք համոզված լինի, որ նախանշված նպատակները ընդհանուր են բոլոր շահառուների համար՝ հաստատության վարչական կազմի, ուսուցիչների, սովորողների, ծնողների և այլն:

ՈՒԹՀՎ վերլուծությունն իրականացվում է մի քանի փուլով՝

1. նպատակների համատեղ սահմանում
2. ամբողջական տվյալների ու տեղեկատվության հավաքն գրառում
3. տեղեկատվության համապարփակ վերլուծություն և համակարգում՝ ըստ ՈՒԹՀՎ <u>վերը</u> նշված 4 ուղղությունների (ուժեղկողմեր, թույլկողմեր, հնարավորություններևվտանգներ)
4. առաջնահերթությունների որոշում՝ շարժվելով ամենակարևոր նպատակներիցն առաջնային խնդիրներից դեպի ավելի քիչ կարևորները նխուսափելով ոչ իրատեսական, խիստ հավակնոտ նպատակադրումներիցու դրաց անորոշ ձևակերպումներից:

«Կարևոր է չանտեսելթույլ <u>կողմերը,</u> առկա հիմնախնդիրները և չթերագնահատելվտանգները, քանի որ դրանք վաղ թե ուշ կհիշեցնեն իրենց մասին, ընդ որում այն ժամանակ, երբ կպատճառեն առավելագույն վնասը: Այս վերլուծության նպատակնէ ոչ թե անմիջապես վտանգների հաղթահարման ուղղությամբ անհնարին քայլեր ձեռնարկել, այլ մշտապես ունենալ դրանք տեսադաշտում և հնարավորության սահմաններում փորձել խուսափել դրանցից: Որոշակի առումով վտանգների գնահատումը և հաղթահարումը կապված է ռիսկի գործոնի հետ»: (2010,Մայք Մորիսոն).

Այսպիսով, նախորդ 1-ից 5-րդ մասերում սահմանված ցուցանիշներինն չափանիշներին հաստատության համապատասխանության մանրամասն ինքնավերլուծության հիման վրա անհրաժեշտ է սահմանել՝

- հաստատության առաքելությունը՝ նպատակը, որն անփոփոխ է տվյալ ժամանակահատվածի համար (միջնաժամկետկամ երկարաժամկետ).
- հաստատության առաջնահերթ նպատակները տվյալ ժամանակահատվածի համար (միջնաժամկետ կամ երկարաժամկետ)
- որոշել նպատակներից բխող խնդիրները և միջոցառումները:

Այնուհետ առաջարկվում է լրացնել ՈՒԹՀՎ վերլուծության ստորև բերվածԱղյուսակ 34-ը

Աղյուսակ 34.ՈՒԹՀՎ վերլուծության

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր՝ տարանջատել վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմը • Վարչական կազմը՝փորձառու է, կարողանում է դպրոցավարության	1. Աշխատակազմի գործունեության թույլ կողմեր՝ տարանջատել վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմը • Անհրաժեշտություն կա բազմապիսի

աշխատանքները կազմակերպել ըստ տարվա ուսումնադաստիրակչական աշխատանքների պլանի,ուսումնական և կարգապահական առումով դպրոցը գտնվում է բարձր մակարդակի վրա: Դպրոցի շենքային պայմանները անվտանգ են աշխատակիցների և սովորողների կենսագործունեության համար: • Ուսուցիչների գերակշռող մասը ունի բարձրագույն մանկավարժական կրթություն:Տիրապետում են տեղեկատվական հաղորդակցման տեխնալոգիաներին:Դասավանդման ընթացքում կիրառվում են տարաբնույթ մեթոդներ և դիդակտիկ պարագաներ, ամիսը 2-3 անգամ դասերն անցկացնում են ինֆորմատիկայի դասարանում • Կամավոր ատեստավորում է անցել 2 ուսուցիչ, որոնք ստանում են հավելավճար: • Դպրոցում ունենք 1 վերապատրատող ուսուցիչ: • Դպրոցի տնօրենությունն մեթոդապես աջակցում է ուսուցիչներին՝ դպրոցում կազմակերպելով տարատեսակ վերապատրաստումներ, կատարվում են փոխադարձ դասալսումներ, հանդիպումներ են կազմակերպվում գրքերի հեղինակների հետ, խրախուսվում է ուսուցչի ինքնակրթությունը: • Դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտը լավ է ,ուսուցիչները սիրով համագործակցում են միմյանց, հոգեբանի և ուսուցչի օգնականների հետ: • Հոգեբանը խմբային և անհատական աշխատանքներ է տանում աշակերտների հետ: Համագործակցում է դասղեկների վարչական աշխատողների և ծնողների հետ՝ կարգավորելով մի շարք միջանձնային և ներանձնային խնդիրներ : • Դպրոցում մարտ ամսին իրականացվել է «Ընթերցանությունը տարրական դպրոցում» ծրագիրը՝ համագործակցելով ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ: • Դպրոցը սերտորեն համագործակցում է ՏՄԱԿ-ի հետ:	վերապատրաստումների, որոնք կնպաստեն դպրոցի արդիականացմանն ու դասապրոցեսի ավելի բովանդակային կազմակերպմանը: • Դպրոցի վարչական կազմը նույնպես վերապատրաստման կարիք ունի: • Դասապրոցեսի ընթացքում որոշ ուսուցիչների կողմից չեն կիրառվում նորագույն մեթոդներ և ՏՀՏ-ներ: Խուսափում են տարաբնույթ մրցույթներից • Տարակարգ ստացած ուսուցիչներ չկան: • Ուսուցիչները դժվարանում են հեռավար ուսուցում կազմակերպելիս: • առկա է ՏՀՏ-ի սակավ կիրառում դասապրոցեսում, • Ուսուցիչների մի մասի մոտ կա համակարգչային գիտելիքների համալրման կարիք

2. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության ուժեղ կողմեր • Կոլեկտիվի գլխավորությամբ և աջակցությամբ աշակերտները կարողանում են կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ, մասնակցում են սպորտային, մշակութային և առարկայական օլիմպիադաներին: • Դպրոցի աշակետական համակազմը ակտիվ մասնակցում են ներհամայնքային խնդիրների լուծմանը՝ կատարելով կամավորական տարաբնույթ աշխատանքներ: • Սովորողները իրականացնում են նախագծային, հետազոտական աշխատանքներ և մասնակցում աշակերտական համաժողովների, որոնք կազմակերպվում են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից: • Աշակերտները մասնակցել են առարկայական օլիմպիադաների, տարատեսակ մրցումների: • Դպրոցը խրախուսում է աշակերտների նոր նախաձեռնությունները՝ ապահովելով նրանց անհրաժեշտ ուսումնաօժանդակ և նյութատեխնիկական միջոցներով : • Դպրոցում կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, պահպանվում են ազգային արժեքները, հաղորդակցությունը, մարդասիրությունը: Կարևորվում է աշակերտների ստեղծագործական և քննադատական մտածողությունը: • Դպրոցում չեն խախտվում աշակերտների իրավունքները: • Դպրոցում ակտիվ գործում է աշակերտական խորհուրդը:	2. Սովորողների ուսումնառության և այլ գործունեության թույլ կողմեր • Մեծամասնությունը չգիտի համացանցից ապահով և արդյունավետ օգտվելու կանոնները: Աշակերտների մի մասը ունի համագործակցային և հաղորդակցական հմտությունների պակաս: • Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մասնակիցներ չեն եղել:
3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհուրդի, այլ մարմինների գործունեության ուժեղ կողմեր • Հաստատության թե կառավարման և թե խորհրդակցական մարմինները սերտորեն համագործակցում են միմյանց և դպրոցի հետ: • Ծնողները ունեն երեխաների կրթության հանդեպ մեծ պատասխանատվություն և աջակցում են սովորողներին: • Ակտիվ մասնակցում են դպրոցական	3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհուրդի, այլ մարմինների գործունեության թույլ կողմեր • Իրենց երեխաների հնարավորությունները և կարողությունները գերագնահատելը • Մեդիագրագիտության և համացանցային գրագիտության պակասը: • Մի մասը ուշադրություն չի դարձնում երեխաների առցանցային

միջոցառումներին • Դպրոցում իրականացվում են դպրոց-ընտանիք փոխհամագործակցության մասին սեմինարներ, դպրոց-ընտանիք կապն ապահովող միջոցառումներ:	ապահովությանը:
4. Ռեսուրսներով ապահովվածությունը • Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցումով, ջրամատակարարումով, ինտերնետ կապով: • Դպրոցում առկա համակարգիչները նոր են : • Համալրված է փոխներգործում 1 տեսացրիչով և 2 պրոեկտորով: • Մանկավարժական կադրեր • Նյութատեխնիկական բազա և դիդակտիկ նյութեր • Համակարգչային և ՆԶՊ կաբինետներ • ԱՐՄԱԹ լաբորատորիա • Գրադարանը մշտապես համալրվում է ուսումնաօժանդակ և գեղարվեստական գրականությամբ: • ՄԱԿ-ի համաշխարհային պարենի ծրագրով դպրոցի ճաշարանը համալրվել է նոր գույքով և տեխնիկայով:Դպրոցում իրականացվում է« Տաք սնունդ » ազգային ծրագիրը ,գործում է կապիտալ վերանորոգված ճաշարանը : • Ուսումնական հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար: • Դպրոցը համալրվել է սանանկյուններով և սանհանգույցներով,այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար: • Դպրոցում գործելու է 5 լաբորատորիա: • Լաբորատորիաների համար նախատեսված դասասենյակները վերանորոգվել են ,կահավորվել:	4. Ռեսուրսներով ապահովվածության խնդիրները • Գրադարանը վերանորոգված չէ, ընթերցասրահ չունենք , հանդիսությունների դահլիճը ունի վերանորոգման կարիք: • Ունի համակարգիչներով համալրելու կարիք: • Դպրոցը մասնակիորեն է համալրված սպորտային գույքով: • Դպրոցի ներսում թեքահարթակ չկա : • Դպրոցի շենքն ունի հիմքերն ամրացնելու կարիք: Լաբորատորիաները սեպտեմբեր ամսին կհամալրվեն լաբորատոր սարքերով և նյութերով : • Դպրոցն ունի էլեկտրոնային գրատախտակներով համալրվելու կարիք :

• 5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները • Նոր նախաձեռնությունների գրեթե մեծ մասը պսակվել են հաջողությամբ: • Համագործակցում ենք «Բարձունք» ՀԿ-ի հետ, դպրոցը համալրվելու է կարի մեքենայով, դպրոցում գործելու է կարի խմբակ , և աշակերտական խորհուրդը զբաղվելու է ձեռնարկատիրական գործունեությամբ: • Աշակերտական խորհրդի անդամները վերապատրաստվելու են այդ ուղղությամբ: • Տնտեսագիտական խմբակի ստեղծում: 6. Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը • Համագործակցությունը հաստատության բոլոր մարմինների միջև գտնվում է բարձ մակարդակի վրա 7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված հաջողությունները • Պայմանավորված դպրոցի ֆինանսավորման նոր կարգով՝ հատատության բյուջեն ավելանում է	5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ թույլ կողմերը • Ձեռնարկատիրական գործունեության ոչ ճիշտ իրականացումը: 6. Հաղորդակցություն, համագործակցություն • Առավել պասիվ ծնողներին ներգրավել դպրոցում կատարվող աշխատանքներին: 7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված դժվարությունները և խնդիրները

	• չկա
Հնարավորություններ 1.Աշակերտ թվի ավելացում: 2.Շենքային պայմանների բարելավում: 3.Քիմիայի, կենսաբանության,աշխարհագրության,ֆիզիկայի և ինֆորմատիկայի նոր լաբորատորիաներով համալրում: 4.Նոր ճաշարանի հիմնանորոգման ավարտ:	Վտանգներ 1.Աշակերտական թվի պակասում 2.Ֆինանսական սահմանափակումներ 3. Արտակարգ իրավիճակներով պայմանավորված սահմանափակումները:

Աղյուսակ 34-ը պետք է լրացնել՝ դասակարգելով ուժեղ կողմերը, թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ առաջնահերթությունների: Այնուհետ հաշվի առնելով բոլոր գործոնները և ելնելով նախանշված իրատեսական նպատակներից և խնդիրներից՝ մշակել ռազմավարություն և ձեռնարկվող միջացառումներ:

Հավելված 2. Հարցումների իրականացման առաջարկվող մեթոդաբանություն

Ուսումնական հաստատության գործունեության ինքնավերլուծությունը կատարելիս մի շարք ցուցանիշներին և չափանիշներին համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ է իրականանցնել հարցումներ: Առաջարկվում է հարցումների ստորև նկարագրված մեթոդաբանությունը:

1. Հաստատության կողմից ինքնավերլուծություն կատարելիս հարցման մեթոդն օգտագործվում է, երբ ցուցանիշների և չափանիշների աղյուսակում տվյալ ցուցանիշի կամ չափանիշի գնահատման մեխանիզմ սյունակում նշված է «հարցում» բառը: Հարցումը առավել տարածված սոցիոլոգիական հետազոտության մեթոդներից է: Հարցման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հետազոտության ժամանակ կարևորը ընդհանրական պատկերի սատցումն է, այլ ոչ թե առանձին հարցվողի տեսակետը: Սրանովհարցմանմեթոդըտարբերվումէհարցազրույցից, երբկարևորէհենցհարցազրույցտվողանձիտեսակետը:

2. Հարցումներն անցկացվում են տվյալների հավաքման և վերլուծության նպատակով՝ նախապես մշակված հարցաթերթիկների միջոցով (անկետավորում): Հարցաթերթիկը կառուցվածէ.
-նախաբանից, որտեղ համառոտ նշվում է հարցման նպատակն ու խնդիրները,
-ում կողմից է անցկացվում հարցումը (տվյալ դեպքում հաստատության տվյալները),
-հարցաթերթիկի լրացման կանոններից, որտեղ նշվում է, թե ինչպես պետք է լրացնել հարցաթերթիկը,
-բուն հարցաշարից, որտեղ նշվում են հարցման թեմային վերաբերվող հարցերը
-անձնագրային մասից, որտեղ նշվում է հարցվողի սեռը, տարիքը, կրթությունը և ըստ անհրաժեշտության այլ անձնական տվյալներ:

3. Հարցերը լինում են բաց, փակ, և կիսափակ: Բաց հարցերը չեն ենթադրում պատասխանների տարբերակների առկայություն: Փակ հարցերի պարագայում պատասխանները նախօրոք նախատեսված և բերված են հարցաթերթիկում՝ հնարավություն տալով հարցվող անձին ընտրել պատասխանը հնարավոր տարբերակներից: Կիսափակ հարցերը թույլ են տալիս նշել սեփական պատասխանը, եթե առաջարկված ոչ մի պատասխանի հետ հարցվողը համաձայն չէ: Կիսափակ, ինչպես և բաց հարցերը ավելի դժվար է մշակել, քան փակ հարցերը, քանի որ անձնական կարծիք արտահայտող պատասխանները անհրաժեշտ է խմբավորել և կոդավորել:

4. Ուստի հաստատությանը խորհուրդ է տրվում բացառել բաց հարցերը և օգտագործել միայն փակ հարցեր: Խիստ սահմանափակ դեպքերում, երբ շատ կարևոր է հարցվողների տեսակետը կամ մեկնաբանությունը կարելի է հարցաթերթիկում ընգրկել նաև կիսափակ հարցեր:

5. Հարցումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է խմբավորել հարցում պահանջող ցուցանիշները և չափանիշները՝ ըստ հարցվողների խմբերի (օրինակ՝ ուսուցիչներ, սովորողներ, ծնողներ և այլն) և յուրաքանչյուր խմբի համար կազմել մեկ հարցաթերթիկ՝ ներառելով այդ խմբին վերաբերող բոլոր ցուցանիշներին և չափանիշներին վերաբերող հարցերը:

6. Առաջարկվում է հարցաթերթիկներում ներառել առավելագույնը 5 հարց: Հարցերը անհրաժեշտ է ձևակերպել այնպես, որ հաստատության համապատասխանությունը տվյալ ցուցանիշին կամ չափանիշին լավագույնս բացահայտվի: Օրինակ՝ հարցի դասական ձևակերպումը կարող է սկսվել. «Համաձայնե՞ք, որ...». (շարունակությունը կազմում է հարցի բովանդակությունը), իսկ հաճախ օգտագործվող տիպային պատասխանները՝ «Այո, ավելի շուտ այո, ավելի շուտ ոչ, ոչ, չեմ կարող պատասխանել, տեղյակ չեմ»: Կարող են օգտագործվել նաև այլ հարցադրումներ և պատասխաններ. օրինակ՝ «Որքա՞ն հաճախ եք դուք...», «Որքանով կամ ինչ չափով ե՞ք դուք բավարարված...», «Որաքնո՞վ է նպաստել...» (շարունակությունը կազմում է հարցի բովանդակությունը) :

7. Հարցաթերթիկում կարող են ներառվել նաև դիրքորոշում կամ վերաբերմունք արտահայտող պատասխաններ ունեցող հարցեր: Օրինակ՝ «Ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցությունը» չափանիշի վերաբերյալ կարելի է տալ հետևյալ հարցը, «Ինչպիսի՞ն է հաստատության ծնողական և աշակերտական խորհուրդների միջև համագործակցությունը»: Այս հարցի հնարավոր պատասխանները կարող են լինել հինգը, որոնցից յուրաքանչյուրն ամրագրում է հարցի վերաբերյալ հնարավոր դիրքորոշումներից մեկը.

- ծնողական և աշակերտական խորհուրդները սերտորեն համագործակցում են,
- ծնողական և աշակերտական խորհուրդները համագործակցում են անհրաժեշտության դեպքում,
- ծնողական և աշակերտական խորհուրդները որոշ դեպքերում համագործակցում են, սակայն այդ համագործակցությունը բավարար մակարդակի վրա չէ,
- ծնողական և աշակերտական խորհուրդները չեն համագործակցում,
- այլ (հարցվողի պատասխանը)

8. Որակյալ և արժանահավատ հարցում իրականացնելու համար անհրաժեշտ է պահպանել հարցեր կազմելու հետևյալ կանոնները.

- պահպանել էթիկական նորմերը և ապահովել անձնական բնույթի տեղեկատվության կոնֆիդենցիալությունը (գաղտնիությունը), որպեսզի հարցվողները չմտահոգվեն հարցերին ճիշտ պատասխանելու հնարավոր հետևանքներից և լինեն անկեղծ,
- հարցաթերթի յուրաքանաչյուր հարց պետք է պարունակի միայն մեկ հարցադրում. օրինակ՝ «Որքանով եք դուք բավարարված ուսուցչի գիտելիքներից և դասավանդման հմտություններից» հարցը պարունակում է միաժամանակ 2 հարցադրում և փորձում է բացահայտել թե՛ ուսուցչի գիտելիքները, թե՛ դասավանդման հմտությունները.
- հարցաթերթի յուրաքանաչյուր հարց պետք է ներառի պատասխանի բոլոր հնարավոր տարբերակները և ապահովի պատասխանների տարատեսակություն.
- հարցաթերթի յուրաքանաչյուր հարցի պատասխանների տարբերակները պետք է լինեն փոխբացառող և ապահովեն իմաստալից տեղեկատվության տրամադրում, որպեսզի հարցվողը չտարակուսի որն ընտրել և ունենա միայն մեկ ընտություն. Օրինակ՝ «Որտեղ եք դուք մեծացել».

ա)Հայաստանում
բ)Քաղաքում
գ)Գյուղում

հարցը ստեղծում է տարակուսանք, քանի որ պատասխանները փոխբացառող չեն. թե՛ քաղաքում, թե՛ գյուղում մեծացած անձը կարող է ընտրել 2-ական պատասխան՝ համապատասխանաբար ա) և բ) կամ ա) և գ), իսկ ստացվող տեղեկություններն օգտակար չեն:

9. Հարցաթերթիկում հարցերը համարակալվում են: Լրացված հարցաթեթիկների մշակումը կատարվում է համակարգչի միջոցով՝ համապատասխան ծրագրով (օրինակ՝ Excel): Հարցերի պատասխաններն իրենց հերթին համարակալվում են: Հարցման արդյունքների մշակման, պատասխանների մուտքագրման համար հարցերի հերթական համարները հարցաթերթիկում

կարող են ընդունվել որպես այդ հարցերի կոդեր, իսկ հարցերի պատասխանների համարները՝ որպես պատասխանների կոդեր: Յուրաքանչյուր լրացված հարցաթերթիկ ևս համարակալվում է:
10.Լրացված հարցաթերթիկների տվյալները մուտքագրվում են ընտրված համակարգչային ծրագրով ևս տեղծվում է տվյալների բազա: Բազայում մուտքագրվում են հարցերը և պատասխանները՝ իրենց համպատասխան կոդերով: Այսպիսով, մուտքագրման արդյունքում ստացվում են թվեր, որոնք կարելի է կարդալ որպես օրինակ՝ 1. 1. 3, այսինքն առաջին հարցվածը առաջին հարցին տվել է երրորդ պատասխանը: Մեր վերը բերված օրինակի համար սա նշանակում է, որ առաջին հարցվածը ընտրել է «ծնողական և աշակերտական խորհուրդները որոշ դեպքերում համագործակցում են, սակայն այդ համագործակցությունը բավարար մակարդակի վրա չէ» պատասխանը: Բոլոր տվյալների մուտքագրումից հետո կատարվում է հաճախությունների հաշվարկ, ինչը թույլ է տալիս տեսնել, թե ինչպես են բաշխվել հարցվածների կարծիքները՝ ըստ հարցաթերթիկում տրված պատասխանների տարբերակների:
11. Հարցվողների ընտրանքը կազմելու, այսինքն՝ հարցման ենթակա անձանց որոշելու համար, առաջին հերթին անհրաժեշտ է որոշել հարցման ենթակա շահառու անձանց խումբը (սովորողներ, ուսուցիչներ և այլ): Այնուհետ հարցման կարևոր փուլ է՝ տվյալ շահառու խմբի անձանց ամբողջ բազմությունից հարցման ենթակա անձանց ընտրությունը կամ, այլ կերպ ասած, հարցվողների ընտրանքի կազմումը: Օրինակ՝ հաստատության բոլոր ուսուցիչներից հարցվող ուսուցիչների ընտրությունը՝ այն ուսուցիչների ընտրությունը, ովքեր պետք է լրացն են հարցաթերթը:
12.Հարցման ընտրանքի կազմման համար առաջարկվում է կիրառել պատահական ընտրանքի մեթոդը: Ստատիստիկայում պարզ պատահական ընտրանքը դա այն անձանց փոքր խումբն է, ովքեր ընտրվել են անձանց ավելի մեծ բազմությունից: Ընդ որում, յուրաքանչյուր անձ այդ փոքր խմբում ընտրվել է պատահականորեն: Դա նշանակում է, որ ընտրանքի կազմման ժամանակ յուրաքանյուր անձ ունի ընտրանքում ընդգրկվելու հավասար հավանականություն: Պարզ պատահական ընտրանքի մեթոդն ունի ակնհայտ առավելություններ: Այս մեթոդը շատ հեշտ է ու հասկանալի, իսկ հետազոտության արդյուքները կարելի է տարածել ուսումնասիրվող շահառու խմբի ամբողջբազմության վրա: Ամենից կարևորն այն է, որ լիովին պահպանվում է պատահականության սկզբունքը, ինչը թույլ է տալիս խուսափել սիստեմատիկ սխալներից:
13. Պատահական ընտրանքի մեթոդով ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը, որոշելու համար առաջարկվում է օգտագործել ընտրանքի հաշվարկման պարզեցված բանաձևը:
14. Հաստատություններին որպես օգնություն ստորև աղյուսակ 33- ում տրված է պատահական ընտրանքի պարզեցված բանաձևով հաշվարկված ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը, տարբեր բազմությունների համար (հաշվարկը արված է պատահական ընտրանքի հիման վրա՝ 95 տոկոս ներկայացուցչականության պարագայում, 5% վստահելի միջակայքի պայմաններով).

Աղյուսակ 33.
Հարցման բազմություն
Ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը

Մինչև 100	80
101-300	169
301-500	217
501-700	248
701-1000	278
1001 և ավելի	302

15. Ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը, որոշելուց հետո անհրաժեշտ է որոշել, թե ինչպես ընտրել հարցվող անձանց, օրինակ՝ ինչպես հաստատության 100 սովորողներից ընտրել հարցվող 80 սովորողին: Պատահական ընտրանքի պարագայում կարելի է օգտագործել տարբեր մեթոդներ, օրինակ՝ վիճակահանություն կամ պատահական թվերի աղյուսակ: Վիճակահանության դեպքում է հարցման ենթակա շահառու խմբի անձանց ամբողջական բազմության յուրաքանչյուր անձի տվյալները գրվում են առանձին թղթիկի վրա, այնուհետ բոլոր թղթիկները դրվում են ինչ-որ արկղի կամ տուփի մեջ, դրանք խառնում են և այդ տուփից առանց նայելու հանվում են հարցվողների թվին հավասար թղթիկներ: Օրինակ՝, եթե հաստատությունն ունի 500 սովորող, ապահամաձայն

Աղյուսակ 33-ի հարցվող սովորողների թիվը պետք է կազմի 217: 500 սովորողից յուրաքանչյուրի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, դասարան) գրվում է առանձին թղթիկի վրա: Այնուհետև բոլոր 500 թղթիկները դրվում են որևէ տուփի մեջ, խառնվում և հանվում է 217 թղթիկ: Այդ 217 թղթիկների վրա գրված սովորողների տվյալներով որոշվում են հարցվող սովորողները:
16.Հարցվող անձնաց կարելի է ընտրել նաև մեխանիկական ընտրության մեթոդով: Այդ նպատակով նախ կազմվում է հարցման ենթակա շահառու խմբի անձանց ամբողջական ցանկը (անուն, ազգանուն, հեռախոս և այլն): Այդ ցանկից հավասար պարբերականությամբ /միջակայքով ընտրվում են համապատասխան թվի հարցվողներ: Այդ միջակայքը կոչվում է ընտրանքի քայլ: Ընտրանքի քայլը հավասար է հարցման բազմությունը բաժանած հարցվողների թվին:
Ընտրանքի քայլ=N/n, որտեղ N-ը հարցման բազմությունն է, իսկ n-ը հարցվողների թիվը:
Օրինակ, եթե 500 սովորողից պետք է հարցվեն 217-ը, ապա հարցման քայլը հավասար է 2.3=500/217: Սա նշանակում է, որ 500 սովորողների ցանկից պետք է ընտրվի յուրաքնաչյուր 2-րդը:
Ընտրության սկիզբը որոշվում է պատահականության սկզբունքով՝ ընտրանքի քայլի շրջանակներում: Օրինակ՝, եթե ընտրանքի քայլը հավասար է 5-ի, ապա ընտրությունը պետք է սկսել 1-ից 5 միջակայքում ցանկացած թվից:

Հանձնաժողովի նախագահ՝ - Ք. Գալստյան (տնօրեն)
Հանձնաժողովի անդամներ՝
1.Ռուզաննա Գասպարյան__մանկավարժական խորհրդի անդամ
2. Լիլիթ Ադամյան- կառավարման խորհրդի անդամ
3. Պետրոսյան Սոնա_համայնքապետարանի ներկայացուցիչ
4.Ալինա Մայդիսիյան __ծնողական խորհրդի նախագահ
5. Սարգսյան Նաիրա_կառավարման խորհրդի նախագահ
6.Կարապետյան Լիլիթ_համայնքապետարանի ներկայացուցիչ